

**Արամ Սարգսեան.**  
«99 տոկոսով հակաժ են չհաւատալու  
կազմակերպիչների բացակայութեան  
վարկածին»

*Արամ Սարգսեան*



- ԳԱԱ տնտեսագիտութեան  
ինստիտուտը սկսեց կրել այդ հա-  
ստատութեան նախկին տնօրէն,  
հոկտեմբերի 27-ի ոճրագործու-  
թեան զոհ, ակադեմիկոս Միքայէլ  
Քոթանեանի անունը: Անւանակո-  
չութեան արարողութեանը մաս-  
նակցում էին գիտնականներ, քա-  
ղաքական ու պետական գործիչ-  
ներ, մտերիներն ու հարազատ-  
ները: Ելոյթ ունեցողները դրագ-  
ներ էին յիշում Միքայէլ Քոթանե-  
անի կեանքից, ընդգծում նրա մարդկային եւ  
մասնագիտական յատկանիշները: Տնտեսագիտութեան  
ինստիտուտն ակադեմիկոսի անամբ անւանակոչելու  
կապակցութեամբ «Ազգի» թղթակցին իր կարծիքը յայտ-  
նելով, նախկին վարչապետ Արամ Սարգսեանը նշեց, որ  
այս քայլը «ժողովրդի երախտագիտութեան խօսքն է եւ  
կարծում եմ, որ սփոփում է հարազատներին»:

Արամ Սարգսեանի հետ մեր հարցազրոյցի հիմնա-  
կան թեման վերաբերում էր հոկտեմբերի 27-ի գործի ըն-  
թացքին, որտեղ նախկին վարչապետը հանդէս է գալիս  
որպէս տուժող կողմ:

- Պրն. Սարգսեան, կարծես թէ հոկտեմբերի 27-ի գոր-  
ծի դատավարութիւնը ուշանում է:

- Դա կապւած է գործին փաստաբանների ծանօ-  
թացման հետ: Գործը 40 հատորից աւելի է եւ լուրջ ծա-  
նօթացման կարիք ունի: Ինչ-որ չափով ուշացման մեղա-  
ւորը զինուորական դատախազութիւնն է, որը չի հասցնում  
նախաքննութեան նիւթերը ժամանակին տրամադրել:  
Բայց անգամ չուշացնելու դէպքում փաստաբաններն ա-  
ւելի արագ ծանօթանալու հնարաւորութիւն չեն ունենայ:  
Գործնականում իւրաքանչիւր հատորին տրւում է 2 օր: 40  
հատորին պէտք է տրի 80 օր:

- Տրւած ժամանակը համապատասխանո՞ւմ է ծանօ-  
թացման անհրաժեշտ ժամանակահատւածին:

- Տրամադրւած ժամանակը եւ հատորների քանակն  
այդ ժամանակահատւածին չեն համապատասխանում:

- Իսկ Դուք անձամբ ծանօթանո՞ւմ էք տւեալներից,  
ունէ՞ք ինչ-որ նախնական եզրակացութիւններ:

- Գործի ընթացքին հետեւել եմ վարչապետ աշխա-  
տած ժամանակ, բայց ոչ ամբողջ խորութեամբ: Ծանօ-  
թացել եմ եղած վարկածների հերքման եւ չհերքելու հա-  
մար բերւած փաստարկներին, իսկ այժմ՝ հիմնական  
կէտերին, որոնցում կան կասկածելի մասեր:

- Կա՞ն վարկածներ, որ առաւել հաւանական են թում:

- Ցաւօք սրտի այս ժամանակահատւածի քննութիւնը  
որեւ վարկած չի հերքել:

- Չեզ քաւարարո՞ւմ է գործի ընթացքը:

- Մինչեւ այժմ զինուորական դատախազութեան կող-  
մից՝ ոչ: Այս փուլում, որ աշխատում են փաստաբանները՝  
այո, քաւարարում է:

- Մասնաւորապէս ի՞նչը նկատի ունէք:

- Ես իրաւապահ չեմ, եւ փաստաբանները, որ սերտում  
են գործը, կարողանում են նկատել այն տեղերը, որտեղ  
կան վրիպումներ եւ որոնք կարդացել եմ, բայց չեմ  
նկատել:

- Արդեօք փաստաբանական խումբը քաւարար՞ է Չեր  
շահերը պաշտպանելու համար:

- Իմ կարծիքով, ցանկանում ենք մենք դա, թէ՛ ոչ,  
գործը քաղաքական է եւ աւելի շատ քաղաքական յենա-  
րանի օգնութեան անհրաժեշտ կը լինի: Իսկ փաստաբան-  
ներն իրենք (Տիգրան Չանոյեանը եւ այլք) դիմել են տար-  
բեր փաստաբանական ծառայութիւնների, որոնց հետ ես  
էլ եմ գրուցել ու պայմանաւորել նրանց Հայաստանում  
լինելու ծախսերը հոգալ: Դրանք լուրջ փաստաբանական  
խմբեր են, միջազգային ճանաչում ունեցող, որոնք կը  
մասնակցեն դատավարութեանը:

- Իր վերջին հարցազրոյցում Գագիկ Չհանգիբեանն  
այն եզրակացութեան է եկել, որ ոճրագործութիւն իրա-  
կանացողներն իրենք նաեւ կազմակերպիչներն են: Այ-  
սինքն՝ նա փոխել է իր նախնական տեսակէտն առ այն,  
որ յանցագործութիւնն իրականացնողների թիկունքին  
կազմակերպիչներ կան:

- Դա վարկածներից մէկն է, որը ես հաւանական եմ  
համարում 1 տոկոսով: 99 տոկոսով հակաժ եմ չհաւա-  
տալու այդ վարկածին, եւ դատարանում փաստաբան-  
ները դա կապացուցեն: Տուժողների շահերը պաշտպա-  
նող փաստաբանների նպատակը հիմնականում ոչ թէ  
կոնկրետ մարդկանց բացալայտելն է, այլ ցոյց տալ, որ  
սա հայոց պետականութեան դէմ ուղղւած քայլ էր՝ լաւ  
մտածւած եւ կազմակերպւած: Ես դրանում համոզւած եմ:

- Հնարաւոր համարո՞ւմ էք, որ դատն անընդհատ կան  
երկար ժամանակով ճգճգի:

- Ինձ այժմ ոչինչ չի զարմացնում: Ես կարծում եմ, որ  
դա հնարաւոր է: Նկատի ունենալով տուժողների եւ հար-  
ցաքննութեան ենթակայ վկաների թիւը, գործը վարող-  
ների մեծամասնութիւնն ու ամբիցիոզ լինելը, հնարաւոր է  
դատավարութիւնը տանել որոշակի շտուի: Սակայն փա-  
տաբանական խմբի հիմնական նպատակը շտուից գերծ  
մնալն է:

- Եւ վերջին հարցը: Ինչպէ՞ս էք գնահատում ներկայ  
կառավարութեանն ու վարչապետին, ի՞նչ կարծիքի էք  
խորհրդարանում ընթացող վերադասաւորումների մասին,  
որտեղ կառավարութիւնն ինքն է իր համար մեծամաս-  
նութիւն ձեւաւորում:

- Իմ մօտեցումները բացարձակ տարբեր էին: Ես  
գաղափարին էի հետեւում եւ քաղաքական մարդ չեմ:  
Բոլոր կուսակցութիւններին ընդունում եմ համահաւասար  
եւ նրանց հետ երբէք առեւտուր չեմ արել: Չեմ կարծում  
նաեւ, որ այժմ առեւտուր է արում: Ուղղակի կան որո-  
շակի ուղղութիւններ պետութեան տնտեսական իրավի-  
ճակի վերաբերեալ: Յանկացած վարչապետ ընտրում է  
իրեն հոգեհարազատ ուղղութիւնը ու դրան հասնելու  
համար բանակցում քաղաքական ուժերի հետ:

Ես չեմ ցանկանում բողոքել այսօրայ կառավարու-  
թիւնից: Գեղեցիկ բան չէ ասել, թէ ես աւելի լաւն էի կան  
ինձնից յետոյ եղածը՝ աւելի վատը: Երբեմիցէ չեմ լսել, որ  
ասեն, թէ ինձնից յետոյ եկածն աւելի լաւն է: Անդրանիկ  
Մարգարեանն իմ ընկերն է: Կարծում եմ, որ ազգին նիւր-  
եալ մարդ է եւ ազգին վնասող քայլ չի կատարի: ■

«Ազգ»-6/9/00

ԲԵՆՅ ԿՅ ՆՅ ՍԾՅ ՍՅ ՍՅՆ

Բողոք թեկնածուները ելոյթ ունեցան.- Սուրբ Թարգմանչաց եկեղեցու շրջափակում, սոյն քաղաքի հոկտեմբերի 9-ին Նարմաք քաղաքում գրանցած բողոք թեկնածուները 4 բուլետի սահմաններում ելոյթ ունեցան: Նրանք ներկայացրին իրենց կենսագրականը եւ յետագայ ծրագրերը: Այս շրջանում գրանցել էին 24 թեկնածուներ, որոնցից ընտրել են 13-ը:

Ելոյթ ունեցան Մաջիդիէի թեկնածուները.- Սոյն քաղաքի Հոկտեմբերի 10-ին մաջիդիէ քաղամասի Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնների համար գրանցած թեկնածուները ներկայացրին իրենց ծրագրերը եւ կենսագրականները: Այդ քաղում գրանցել էին 16 թեկնածուներ, որոնցից ընտրեցին 8 հոգի:

ՊԺ-ի թեկնածուների բռնցիկները տարածել են համայնքում.- Թեհրանում քայլերիս կարելի էր դիտել 12-րդ Պատգամաւորական Ժողովի թեկնածուների յայտարարութիւնները խանութների ապակիների վրայ եւ փողոցների պատերին:

ԲաճՅի ՍՄ Համալիրը առաջադրել էր 4 թեկնածուներ.- Նարմաք քաղամասի ԲաճՅի Մարգարէական կոնքրետային Համալիրը 12-րդ Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնների համար առաջադրել եւ հովանաւորում էր 4 թեկնածուների. 1- Պրն. Պետրոս Արզարեան (Համալիրի վարչութեան նախագահ), 2- Դոկտ. Արմինէ Ղազարեան, 3- Դոկտ. Ռուբիկ Մարգարեան եւ 4- Դոկտ. Ալեքսէյ Անթրանեսեան: որոնք գրաւելով առաջին, երրորդ, եօթերորդ եւ իներորդ տեղերը 100 տոկոսով ընտրուեցին:

Մաջիդիէ քաղամասի ընտրութիւնները.- Մաջիդիէի թեկնածուներից առաջին տեղը գրաւեց Ամենաերիտասարդ թեկնածու ճարտ. Ալբերտ Քոչարեանը:

Անհանգստացած է սրբազան Ահայրը.- Ս. ք. Հոկտեմբերի 13-ին Արարատ մարզահամալիրում նշեց

ՀՅԴ-ի 110-ամեակը: Ելոյթ ունեցաւ Թեհրանի թեմակալ առաջնորդ Ս. Սեպուհ եպիս. Սարգսեանը: Նա իր ելոյթի ընթացքում ամբողջութեամբ հանդէս եկաւ որպէս ծայրայեղական կուսակցական:

Սրբազան հայրը իր ելոյթի ընթացքում նշեց, որ «սուր» են բարձրացրել մեր դէմ, մարտահրաւր են նետել մեր առջեւ:

Մշակոյթի տօնը մեծարեց Հայոց Ակումբի յարկի տակ.- Սոյն քաղաքի հոկտ. 23-ին մշակոյթի օրը մեծարեց Թեհրանի Հայոց Ակումբի սրահում: Օրւայ բանախօսն էր տիկ. Ժեմո Պարսամեանը (Բարսամեան): Բացման խօսքից յետոյ ելոյթ ունեցան, ասմունքողներ, պարխումբը եւ անհատ պարող-ուիները:

Մշակոյթի օրւան նիւրած ծրագիր՝ ԲաճՅի Ս.Մ.Հ. ում.- Սոյն քաղաքի հոկտ. 24-ին Թեհրանի՝ ԲաճՅի Ս.Մ. համալիրի նորակառոյց սրահում տեղի ունեցաւ գեղարւեստական ձեռնարկ՝ նիւրած «Մշակոյթի» օրւան:

Միութեան արեստի բաժնի պատասխանատու՝ պրն. Սարտիկ Հախնազարեանի բացման խօսքից յետոյ, ծրագիրը շարունակեց գեղարւեստական (երգ, պար եւ ասմունք) կատարումներով, որոնց կատարողներն էին վերոյիշեալ միութեան անդամ-ուիները:

Հարկ է նշել որ ծրագրի տարբեր բաժնիների պատասխանատուներն էին՝ Ժիրայր Մովսիսեանը, Կարինէ Աղայեանը, Այլոյր Մահմուդեանը, Մարիետ Մեհրաբեանը, Արիւն Յովհաննիսեանը Ռուբինա Մայիլեանը եւ Ռայմոնդ Քոչարեանը:

ԲԵՆՅ ԿՅ

Պրն.Յ. Սերգէյ Բալասանեանը՝ Ասիայի «Սէյմոյոզիա» յանձնախմբի նախագահ.- Սոյն քաղաքի հոկտ. 10-12-ին Թեհրանի գէոՅի-գիկայի ինստիտուտում տեղի ունեցաւ ասիական սէյմոյոզիական յանձնաժողովի 3-րդ համագումարը: Այդ համագումարին 21 երկրների շարքում մասնակցում էր Հայաստանի պատմաբանութիւնը՝ 25 մասնագետներով:

Ստացած տեղեկութիւնների համաձայն ասիական սէյմոյոզիական

յանձնախմբի՝ նախագահ ընտրեց, Հայաստանի պատմաբանութեան ղեկավար՝ պրն.Յ. Սերգէյ Բալասանեանը:

Անշուշտ դա մեծ նշանակութիւն ունի, հայ մասնագետների համար՝ գիտական- տեխնոլոգիական ներդրումներ ունենալու Ասիայի տարածքում:

Իրանի բնակչութիւնը.- (Փեզեշկի Էմրոյ): Ըստ 1996 թ.-ի մարդահամարի Իրանի բնակչութիւնը կազմում է մօտ 60 միլիոն հոգի, որի 23.7 միլիոնը 15 տարեկանից ցածր տարիք ունեն: Ըստ այդ տեղւայների 100 տարւայ ընթացքում իրանի բնակչութիւնը 6 անգամ աւելացել է: Հարկ է նշել, որ բնակչութեան աճը չի համապատասխանում հասարակութեան հասարակական ու տնտեսական աճի հետ, որը ստեղծում է բազմաբնոյթ դժարութիւններ:

ԾՅ ԹՅ ԷՅ Յ Կ

450 հոգի սկսեցին աշխատել.- (Հայաստանի Հանրապետութիւն 15.9.00): Աւելի քան 450 գործազուրկներ աշխատելու հնարաւորութիւն ստացան՝ բարեկարգման աշխատանքների մասնակցելով «Մնունդ աշխատանքի դիմաց» ՄԱԿ-ի ծրագրի շրջանակում, վերանորոգելով, կանաչապատելով փողոցներն ու այգիները, մաքրելով անձրեւաջրերի, կոյուղիների խողովակները եւ այլն: 5000 մետր նոր ռոռման ջրատար են գցել բանորները եւ փոխել 450 մետր կոյուղու խողովակներ, դրել են նոր փականներ: Վերանորոգել են պոմպակայանը եւ ջրամբարները: Նոր ուսումնական տարւայ շէմին արարուեցին 3 դպրոցների եւ մանկապարտէզի վերանորոգման աշխատանքները: Այս ամենի դիմաց բանորները ստանում էին օրաբաժին՝ 2 կգ ալիւր, 0.3 լիտր ձէթ եւ 0.05 կգ շաքարաւազ:

ՕԲԵՅ 1/4Պ 2ՍԵՍ

Մննտների խորոված.- (Ժամանակ 17.6.00): Թախլանդի ազգային կանայք իրենց բրնձի դաշտերից բռնում են բերքը փչացնող առնետներին, խորովում եւ ճա-

նապարհներին վաճառում ազգային էկզոտիկ ճաշատեսակների սիրահար ճամբորդներին: Այդպիսի խորովածի մեկ կիլոգրամը 2 ամերիկեան դոլար արժէ:

**Անբարոյական մթնոլորտը խեղդում է.**-(Ազգ 15.9.00): Հայերի արտագաղթը «Օրեր» համաեւրոպական անկախ ամսագրի մշտական թեման է: «Անբարոյական մթնոլորտը խեղդում է, թէև արգելած է, բայց թմրանիւթեր ու ալկոհոլ են օգտագործում, իսկ մեր այցից մի քանի շաբաթ առաջ հայ կնոջ անմարդկային ծեծի էին ենթարկել Հայաստանից եկած այլ հայեր...», գրում է «Օրերի» խմբագիր Յակոբ Ասատրեանը փախստականների ճամբարում գտնուող հայրենակիցներին հանդիպելուց յետոյ: Խոստովանութիւններն սպասածից անելի տխուր են ու դառ-նագին, «Հայաստանեան մի Ֆիրմա-յի օգնութեամբ մի խումբ բախտակիցներ եկան Չեխիա՝ աշխատանք գտնելու: Սակայն տեղ հասնելուն պէս ոչ ոք ոչինչ չստացաւ»: «Ուր էլ որ եղել են, չորրորդ կարգի մարդ են զգացել ինձ, բայց ինչ արած, պէտք է համբերենք: Մինչև երբ չզիտեն»: «Հեռուոր երկրներից ինքնաթիռները վերադարձան հայի ձեռքերով սպանածների դիակներով: Եւ միայն մայր հողը նրանց հանդէպ բարի գտնեց ու ապաստան տւեց»:

**Գլենդէլի ոստիկանութիւնը անհետք գործեր է յարուցում հայերի դէմ.**-(Ազգ 15.9.00): «AIM» Հայկական միջազգային ամսագիրը (ՀՄԱ) տեղեկացնում է, որ Գլենդէլի «Բրեննիու քոլեջը» հանդիսարահում ՀՄԱ-ի Հագարամեակի ճաշկերոյթ-հանդիպումների շրջանակներում օգոստոսին տեղի ունեցած դասախօսութեան նիւթը եղել է «Հայերը, արդարադատութեան համակարգը եւ օրենքը»: «Կիրակոս եւ Կիրակոս» իրաւաբանական Ֆիրմայի գործընկերներից դատապաշտպան Մարկ Կիրակոսը, խօսք առնելով մի շարք քրեական գործերի իր փորձառութիւնից, փաստեր է բերել եւ նշել, որ Գլենդէլի ոստիկանութիւնը հիմնականում որդեգրելով «մարդակերական» սկզբունքները, շատ յաճախ

անհետք գործեր է յարուցում հայերի դէմ: Վերջիններիս մեղադրում են ինչպէս կեղծ նպատակներ եւ ապահովագրական գումարներ ստանալու, այնպէս էլ բռնի փող կորզելու մէջ, եւ որովհետեւ 90 տոկոսի դէպքում հայերն իրենց մեղաւոր են ճանաչում, մեղադրող կողմի համար հեշտ է լինում նրանց դատապարտելը: Մարկ Կիրակոսը անելացրել է, որ կասկածեալներին մեծ մասամբ «հայ» բառով են բնութագրում՝ բացասական պիտակաւորում կայցնելով ոչ միայն տեալ գործին, այլեւ ամբողջ համայնքին:■

**Հաղորդագրութիւն թիւ 17**

Միքելի հայրենակիցներ. Թեհրանի հայոց թեմի 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնները՝ ձեր բոլորանւեր եւ կարգապահ կեցածքով՝ մեկ անգամ եւս փաստեցին մեր համայնքի անդամների բարձր գիտակցութիւնը՝ իրենց ազգային - հասարակական կեանքի նկատմամբ:

Ստորև ներկայացում է Թեհրան քաղաքի բոլոր թեկնածուների քւէների թիւը՝ առանձին ընտրատարածքներում, որտեղ եւ ճշտած են ընտրուած թեկնածուները:

Այն ընտրաշրջանների բոլոր սրնդուկների արդիւնքներն, ուր տեղադրուած են եղել մեկից անէլի սնդուկներ, կը տեղեկացուն այն թեկնածուներին, որոնք անձամբ կը ներկայանան ԸԿՅ գրասենեակ՝ ազգային առաջնորդարանում:

Բողոքարկու թեկնածուների կողմից ներկայացւած փաստացի եւ օրէնքին համապատասխան գրատր բողոքները պէտք է ԸԿՅ գրասենեակին ներկայացուն մինչեւ սոյն թւականի հինգշաբթի, հոկտ, 26-ի կէսօրայ ժամը 12-ը:

Մեր թեմի միւս քաղաքների քւէարկութեան պատկերը կը ներկայացւի նոյն քաղաքների ընտրական սրնդուկների եւ օրինաւոր արձանագրութիւնները ստանալուց յետոյ՝ մօտ օրերում:

Մէկ անգամ եւս շնորհակալութեան խօսք ենք ուղղում մեր ժողո-

վրդի բոլոր այն անհատներին, որոնք մեր ենթայանձնախմբերից սկսած մինչեւ քւէարկողներ իրենց մասնակցութիւնը բերեցին 12-րդ Պատմատրական ժողովի ընտրութիւններին:

Մեր շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսքն ենք ուղղում նաեւ Իրանի Իպլ. Հանրապետութեան ներքին գործոց նախարարութեան քաղաքական բաժնի պատասխանատուներին, Թեհրան քաղաքի կուսակալութեան բոլոր պատասխանատուներին. Թեհրան քաղաքի կարգապահական ուժերի ներկայացուցիչներին, որոնք բժախնդրօրէն հսկեցին ընտրութիւններին՝ դրանք իրենց բարեյաջող աւարտին հասցնելու համար:

Թեհրանի քաղաքի հինգ ընտրատարածքների քւէների ընդհ. թիւ է եղել 8986:

**Ա.Ա.Աստածածին եկեղեցու ընտրատարածք.**

Քւէների ընդհ. թիւ՝	298
1- Անետ Տեր Գրիգորեան	219
2- Շահէն Յովսէփեան	198
3- Ռուբիկ Սարխաշեան	166
Անձնափոխանորդներ	
4- Դոկտ. Ռազմիկ Յովհաննիսեան	165
5- Մարիէտ Տեր Գրիգորեան	57

**Բ-Սրբոց Վարդանանց եկեղեցու ընտրատարածք.**

Քւէների ընդհ. թիւ՝	466
1-Մարգիս (Մերժիկ) Իսրայէլ Մտեփանեան	392
2-Մուշեղ Ճատրեան	360
3-Ռազմիկ Այդի (Այդինեան)	321
Անձնափոխանորդներ	
4. Գուրգէն Զարամեան	225

**Գ.Ս.Սարգիս եկեղեցու ընտրատարածք.**

Քւէների ընդհ. թիւ՝	2788
1. Միշա Հայրապետեան	2020
2. Արտաւազ Բաղումեան	1750
3. Ժենօ (Ժենիկ) Պարսամեան	1693
4. Դոկտ. Լիդա Միրզա Ազոյեանց	1654
5. Արշալիր Քեշիշեան	1654
6. Նորայր Շահնազարեան	1647
7. Դոկտ. Անելկա Նազումեան	1606
8. Հրայ ԶարիՖեան	1489
9. Արամայիս Ներսիսեան	1433
10. Ռուբէն Կարապետեան	1431
11. Էդարդ Չոհրաբեան	1273
12. Գէորգ Վարդանեան	1226
13. Ռոբերտ Մարտին	1108

## Էձօ՞ն»՞ն

Անձնափոխանորդներ՝	
14. Լեւոն Ահարունեան	1048
15. Դոկտ. Ռայմոնդ Դանիելեան	760
16. Ալբերտ Ռազարեան	719
17. Սուրեն (Հրայր) Շահբազեան	655
18. Արթին Բարայեան	610
19. Ռազմիկ Ազիզեան	585
20. Ռաֆիկ Յովհաննիսեան	568
21. Վարդգէս Գասպարեան	464
22. Խաչատուր Գալուստանեան	446
23. Ալէն Ալեքսէրեան	428
24. Սուրիկ Թիլիմեան	342
25. Դոկտ. Ալբերտ Պօրոսեան	298
26. Էդմոնդ Բեջանեան	262
27. Կարապետ Գրիգոր Մանուսէա	106

<b>ԴԱԳրիգոր Լուսաւորիչ եկեղեցու ընտրատարածք.</b>	
Քւէների ընդհ. քի՝	2301
1. Ալբերտ Քոչարեան	1504
2. Վալոդ Հախիմեան	1221
3. Վահէ Խաչատրեան	1163
4. Հրանդ Քեչիշեան	1121
5. Աշոտ Մինանի	1097

6. Արմիկ Աւագեան	1028
7. Անդրանիկ Հաղվերդեան	1019
8. Յարութիւն Աբումուսի	1013

<b>Անձնափոխանորդներ</b>	
9. Ենուկ Միմոնեան	987
10. Դոկտ. Անդրանիկ Միմոնեան	926
11. Հրայր Խաչատրեան	878
12. Անուշ Աղաջանեան	748
13. Քրիստին Ալեքսան Բաղդասարեան	484
14. Վարդիա Մելիք- Խաչատրեան	451
15. Վահիկ Խաժակի Չիգանի	447
16. Արտաշէս Նազարեան	285

<b>Ե-Սրբոց Թարգմանչաց եկեղեցու ընտրատարածք.</b>	
Քւէների ընդհ. քի՝	3133
1. Դոկտ. Ռուբիկ Սարգսրեան	1879
2. Հրեթմազ Բարսիսանեան	1875
3-Դոկտ. Արմինէ Ղազարեան	1678
4-Երւանդ Զամանի	1620
5-Արտեմիա Մկրտչեան	1455
6-Պետրոս Աբգարեան	1425

7-Նորիկ Աբրահամեան	1393
8-Էլմա Գալստեան Իսախան	1381
9-Դոկտ. Ալեքսէր Անթրոնեսեան	1324
10-Վաչիկ Գրիգորեան	1161
11-Հայկազ Շիրանեան	1139
12-Հիլդա Մարգսեան	1089
13-Արմէն Բեգլարեան	1027

<b>Անձնափոխանորդներ</b>	
14. Մանուազ Խաչատրեան	1016
15. Յարութիւն Քեչիշեան	1016
16. Սարգիս Յովսէփեան	930
17. Ժիրայր Շահիջանեան	896
18. Անդրանիկ Շահբազեան	827
19. Մայիս Աբրամի	781
20. Ժորժ Հայրապետեան	651
21. Ռոբերտ Բարայեան	649
22. Յովիկ Յարութիւնեան	625
23. Արմէն Խոտաղովեան	464
24. Մերժ Մնացական Կարապետ	354

**Թ. Ն. Թ. 12-րդ  
ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ  
ԸՆՏՐ. ԿԵՆՏ.**

**ՅԱՆՁՆԱԽՈՒՄ**

### Ղասեր վերցնենք 12-րդ ՊԺ-ի ընտրութիւններից

Ա.թ.Հոկտեմբերի 20-ին աւարտեց 12-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները: Ընտրութիւններում որոշակի փորձառութիւն ձեռք բերեցին թէ առանձին անհատներ, թէ համայնքի ողջ բնակչութիւնը:

Չեղելով ընտրութեան ընթացքին, ականատես եղանք բազմաթիւ թերութիւնների, որոնք եւ միտումնաւոր էին, եւ պատահական: Այդ թերութիւնների և կեղծիքների առկայութիւնը վկայում է չարաշահումների հնարաւորութեան մասին և մտածելու տեղիք է տալիս:

Արդէն աւարտած են 12-րդ ՊԺ-ի ընտրութիւնները և ստորև թարկելով ընտրութեան ընթացքում տեղ գտած և հաւաքագրած թերութիւնները՝ նպատակ ունենք, որ անհատներն ու կազմակերպչական կազմը դասեր քաղելով նշածներից ապագայում անցկացուցելիք ընտրութիւններում թերութիւնները հասցնեն նազազոյմի:

1. Քւէարկողների ինչ որ մասը (10-15%) , դժբախտաբար, գրագետ չլինելով կամ չհետաքրքրելով, մասնակցում էին ընտրութիւններին եւ չգիտէին, թէ ում էին ուզում ձայն տալ: Ընտրական կենտրոններում (դպրոց կամ եկեղեցի) եղած մարդիկ կամ խմբաւորումների կողմից այդտեղ գտնուող մարդիկ օգտագործում էին այդ հանգամանքը և նրանց փոխարէն գրում էին իրենց թեկնածուների անունները:
2. Որոշ անձնագրերում նկատուել են երկու կնիք: Այսպիսիները իրենց անձնագրում չեն նշարկուղ (Բաց գոյն) կնիք ունենալով հնարաւորութիւն են ունեցել քւէարկելու նաև մէկ այլ ընտրակէտում: Հնարաւորութիւն կար նաև, որ որոշ անձնագրերում ընդհանրապէս կնիք չխփւեր և վերջինիս ուղղակի հնարաւորութիւն տրւեր մէկ այլ վայրում կրկին քւէարկելու:
3. Դիտաւորեալ ձեւով կազմակերպւած ուժեր իրենց ձայն տալու ընթացքը երկարացնում ու ձգձգում էին, որպէսզի ազդեն ուրիշ քւէ տուողների վրայ: Կամ քւէ տալուց յետոյ աշխատում էին երկար մնալ քւէասեղանի մօտ և կատարել որոշ յանձնարարութիւն՝ ցուցմունք տալ, թէ ում քւէարկի ներկայ ժողովուրդը:
4. Պատասխանատու անձնաւորութիւնների կողմից դիտաւորեալ կերպով միշտ շեշտուում էր «13 հոգու ձայն տւէք»՝ նպատակ ունենալով «միասնական» ցանկի թեկնածուներին ձայն տալ: Մինչդեռ քւէարկողը իրաւունք ունի մէկ հոգուց մինչեւ 13 հոգու անուն նշելու (սա վերաբերում էր Ս.Սարգիս եւ Նարմաքի շրջաններին, որտեղ ընտրուող պատգամաւորների քանակը 13 էր):
5. «Միասնական» ցանկի թեկնածուների անունները տպագրւած «գեղեցիկ» տարբեր գոյներ ունեցող քարտերի վրայ որոշ քւէարկողների կողմից բերում են դրում էին քւէարկողների սեղանի վրայ եւ որոշ պատասխանատուների կողմից ուղղութիւն էր տրուում քւէարկողներին այդ ցանկին ձայն տալ:
6. Դպրոցների ու եկեղեցիների դռներից դուրս բաժանում էր «Միասնական» ցանկի քարտերը եւ խրախուսում էին քւէարկելու համար եկող անհատներին այդ ցանկին ձայն տալ:
7. Ամենամեծ ու կոպիտ խախտումը քւէների հաշւարկման ժամանակ է տեղի ունեցել: Հաշւարկման ժամանակ, երբ մի քւէ կարդացւում կամ գրւում էր, պէտք է պետական հսկիչ անհատները եւ թեկնածուների վստահելի անհատներն ինչպէս նաև ենթայանձնախմբերի պատասխանատու անդամները հսկէին այդ գործընթացը եւ ստուգէին իւրաքանչիւր աւարտած հաշւարկ: Սակայն, հաշւարկումը շուտ աւարտելու նպատակով, հաշւարկողները միակողմանի առաջարկութեամբ բաժանել էին մի քանի (երկու, երեք կամ չորս) խմբերի, որտեղ անուններ կարդալու կամ գրելու կեղծիքի հնարաւորութիւնը մեծանում էր, որը բնականաբար, կը նպաստեր այդ ընտրակէտներում աւելի շատ ներկայացուցիչ ունեցող խմբաւորումներին և հակառակը:

# Ստացված գրություններ

## «Լոյս» ի յարգելի խմբագրութեան



Երկշաբաթեքերդ իր 18 սեպտ. 2000 թականի համարում, «Յոյսով են որ այդ կոպիտ սխալի համար մեր ժողովրդից պաշտօնապես ներողութիւն խնդրեն» խորագրի ներքոյ հարցազրոյց է ունեցել

Պրն. Լեւոն Ահարոնեանի հետ: Սոյն հարցազրոյցում յիշեալը Հայաստանում տեղի ունեցած աղէտալի երկրաշարժի առիթով ժամանակի ազգային իշխանութեան և իրանահայութեան կողմից կատարած նիքատութիւնների կապակցութեամբ, ի շարք մի շարք թիրիմացութիւն առաջացնող արտայայտութիւնների (որոնց մասին առաջիկայում կը տրի անհրաժեշտ պատասխան): Չեր թղթակցի այն հարցումին թէ՛ «ճիշտ է, որ Վ. Վարդանեանը 100.000 դոլար կանխիկ դրամ է յանձնել Վազգէն Վեհափառին, պատասխանել է «Ես այսպիսի դրամ յանձնելուց բոլորովին լուր չունեմ: Եթէ դա կատարած լինէր, պիտի Պ.Ժ.-ուն զեկուցէր եւ այդ երբեք չի կատարել եւ չի էլ խօսել այդ մասին»:

Նկատի ունենալով խնդրի կարեւորութիւնը եւ այն, որ ըստ մեզ՝ թղթակցի միտումնաւոր հարցումին տրւած պատասխանը (այն էլ մի անձնատրութեան կողմից որը 14 տարի շարունակ եղել է Պատգամաւորական Ժողովի անդամ) անբաստանում է օրայ թեմական Խորհրդին եւ Ի.Ի. խորհրդարանում իրանահայութեան ժամանակի պատգամաւոր Պրն. Վարդան Վարդանեանին եւ ամենակարեւոր ժողովրդի մօտ անվստահութիւն է սերմանում ազգային իշխանութեան նկատմամբ՝ առ այդ պահանջում ենք, որ առաջին իսկ առիթով լոյս ընծայէք մարմնիս կողմից տրւած սոյն գրութիւնը եւ նրան ընթեռնելի կերպով կցէք Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի հաստատագիրը:

Ի գիտութիւն մեր սիրելի ժողովրդի՝ յիշեցնում ենք, որ Հայաստանի աղէտաբեր երկրաշարժից տուժածներին օժանդակութիւն կատարելու նպատակով առաջին փուլում իրանահայութեան նպաստներով բեռնաւորած օդանաւը 1988 թականի դեկտեմբեր 15-ին Երեւան ուղեւորեց եւ նոյն քաղաքով Երեւան մեկնեց նաեւ Պրն. Արտաւազ Բաղումեանը՝ իսկ դեկտ. 21-ին Հայաստան մեկնեց Պրն. Վարդան Վարդանեանը՝ իր հետ տանելով 100.000 դոլարի մի չէք՝ անձամբ յանձնելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա Վեհափառին:


Պրն. Վարդան Վարդանեանը եւ Պրն. Արտաւազ Բաղումեանը նոյն թականի ուրբաթ դեկտ. 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ին են յանձնել 100.000 դոլարի չէքը, որի ստացումը Վեհափառը հաստատել է իր համար 720 դեկտ. 26, 1988 թականի նամակով:

Կատարած օժանդակութիւնների եւ 100.000 դոլարի յանձնման մասին զեկուցումները տպագրել են «Ալիք»-ի 1988-ի դեկտեմբերի 15 եւ 21-ի 2 եւ 3 յունարի 1989 թականի համարներում, իսկ ժամանակի թեմական Խորհուրդը իր շրջանի աւարտին 29.11.1989-ին Պատգ. Ժողովին իր ներկայացրած զեկուցագրում (11-րդ եւ 12-րդ էջերում) ծաւալուն կերպով անդրադարձել է նաեւ Հայաստանի երկրաշարժի առիթով կատարած օժանդակութիւնների մասին:

Առ այդ՝ եթէ 11-րդ Պատգ. Ժողովի անդամ յարգելի Պրն. Ահարոնեանը այդ բոլորով հանդերձ՝ անտեղեակ է կատարւածի մասին, դա իր հարցն է:

**ԹԵՐԱՆԻ ՇԱՅԻՆ ԹԵՍԻ ՅԱՐԱԲԵՐԱՎԱՆ ՍԱՐՄԻՍ**

ՊԱՏՃԵՆԸ՝ «Ալիք» օրաթերթի յարգելի խմբագրութեան օր առաջ տպագրութեան խնդրանքով:



☆☆☆

**Թեհրան**  
Հոկտ. 21. 2000

## «Ալիք» օրաթերթի պատւարժան խմբագրութիւն

Ի պատասխան Չեր յարգոյ օրաթերթի հոկ. 16-ի համարում Ազգային Առաջնորդարանի Յարաբերական Մարմնի կողմից գրւած յայտարարութեան, անհրաժեշտ են համարում ներկայացնել հետեւեալ լուսարարութիւնները տպագրութեան խնդրանքով:

Հայաստանի 1988 թականի երկրաշարժից տուժածների համար հաւաքւած նպաստը մի ամբողջ գումար էր կազմում եւ նրա բաժանելը Պատգամաւորական Ժողովի վաւերացման կարիք ունէր: Թեհրանի Հայոց Թեմի կանոնադրութեան յօդւած 2 եւ 41-ը Չեր ուշադրութեանն են յանձնում:

«Թեհրանի Հայոց Թեմի օրէնսդրոյ ժողովն ու գերագոյն իշխանութիւնը թեմի ՊԺ-ն է, որի անդամները ընտրուում են ժողովրդի ուղղակի քվէներով եւ որի հաստատւած կանոնադրութեան եւ կայացած որոշումների համաձայն դեկլարուում են թեմի ազգային, հասարակական, կրօնական, կրթական, տնտեսական ու վարչական գործերը»:

**Յօդւած 41-ի երկրորդ մասն է:**

«Ծանօթ. Վերոյիշեալ գործողութեան առաւելագոյն քանակը, որ թեմական Խորհուրդը կարող է կատարել առանց ՊԺ-ի հաստատումը ստանալու, իւրաքանչիւր շրջան որոշում է ՊԺ-ը»:

Այդ շրջանի թեմական Խորհուրդի իրաւասութիւնը 2 միլիոն թումանի շուրջ պիտի լինէր (ներկայ թեմական Խորհրդի իրաւասութիւնները, 12 տարի անցնելուց յետոյ, 5 միլիոն թուման է):

Սոյն յօդւածները պարզում են թէ թեմական Խորհրդի սահմաններից դուրս դրամի սպառումը ՊԺ-ի հաստատման կարիք ունէր, որ դա երբեք տեղի չի ունեցել:

Պատգամաւորը իր տեղեկութիւնները ստանում է ժողովներում արձանագրութիւնները ընթերցելուց, բերած զեկուց-

# Ստացված գրութիւններ

ներից, օրակարգերից եւ այլն, ոչ թէ ժողովից դուրս՝ մամուլից:

Թեմական Խորհրդի 29.11.1989 թականի զեկոյցը, որ իր շրջանի աւարտին կատարած աշխատանքներին էր վերաբերում, դա չէր կարող փոխարինել ՊԺ-ի հաստատմանը:

Նկատի առնելով իմ սեպ. 13-ի հարցազրոյցը, որի թեման մեծամասնօրէն ՊԺ-ի տարբեր հարցերն էր, պիտի ընդհանուր առմամբ քննարկէր:

Այդ հարցազրոյցում եթէ 100.000 ԱՄՆ դոլարի յանձնման պարագայի անտեղեակ լինելն է աւել, դա ՊԺ-ում չզեկուցելու պատճառով է եղել եւ տեղեակ չլինելը մեղադրանք չէ:

Ազգային Առաջնորդարանի Յարաբերական Մարմինը նկատի չի ունեցել իմ 20 տարւայ ազգային աշխատանքները եւ պիտի նկատի առնէր, որ ես միշտ պաշտպան եմ եղել Ազգային Առաջնորդարանին եւ դա նորից կը շարունակի ապագայում:

Այս կարգի ատուիսների նպատակը սա է, որ կատարած սխալները նորից չկրկնեն:

Նկատի առնելով այս վերջին ամիսների թեղրանահայ մամուլի աշխատանքներն ու ընտրական յանձնախմբի գործունէութիւնը յուսանք որ, մի անկախ եւ կայուն ՊԺ կը կազմի, որ կը պաշտպանի մեր ժողովրդի շահերը:

**Յարգանք՝  
Լեւոն Ահարոնեան**

«Լոյս» երկշաբաթերթի խմբագրութեանը՝ տպագրութեան խնդրանքով



**ՈՍԿԷ  
ՕՂԱՎՆԵՐ**

**ԼՈՅՍ** երկշաբաթերթը ջերմօրէն շնորհակալորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին:

Մառինա Քեչիշեան – Սեւակ Միրբեգեան  
Աղիկ Ղաղիմեան - Անդրէ Աղաբեգեան  
Կարինէ Մեհրաբեան - Արամիկ Արթին  
Ռուբինա Քեչիշեան - Վաչիկ Վարդանեան  
Քառօլին Ամիրեան - Իսրայէլ Շահբազեան  
Մելինա Գալստանեան - Ջորիկ Ռոստոմեան  
Ալլին Դաւթեան - Գեւիկ Մուրադեան  
Փաուլա Յակոբեան – Դանլէտ Շիրանեան  
Թալին Յարութիւնեան - Ալէն Աւետեան  
Ադրինէ Այւազեան – Սերժիկ Փափեւեան  
Սեղա Մուրադեան – Դանլետ Պետրոսեան

## Տեղու.Նի

*Լոյս* երկշաբաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներ-քոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- ▲ Մարգիս Կարապետեան
- ▲ Վիկտորիա Բաղդասարեան (Աղախանեան)
- ▲ Գրիշ Ասլանեան
- ▲ ՕՖելիա Մելիքեան (Մելիք Աղամեան)
- ▲ Հայրապետ Բալեան
- ▲ Դոկտ. Լեւոն Օրբէլեան
- ▲ Մադաթ Շահբազեան (Յովսէփեան)
- ▲ Ալմաստ Սալմասեան (Գրիգորեան)
- ▲ Աղանիկ Խաչեան (Թարսերդեան)

## Երախտագիտական խօսք

Այսու մեր խորին շնորհակալական և երախտագիտական խօսքն ենք ուղղում մեր սիրելի հայրենակից-թաղակիցներին, որոնք ձայնակցեցին մեր հրաւերին ու քւէարկեցին Թ.Գ.Թ. 12-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւններին մասնակցող Դանալիրիս հովանաւորած թեկնածուներին:

**Հայ Ս. Ս.  
Րաֆֆի Համալիր**



Լոյս է տեսել եւ վաճառուում է՝ Դայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսեայ «Ապագա» հանդէսը

آپاگ

# ԸՆԴՀԱՏԻԱՑ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

1999 թ. հոկտեմբերի 27-ի ողբերգության առիթով սոյն հարցազրույցը տպագրում ենք Վազգեն Սպարապետի յիշատակին:

**Խմբ.**

**Հ.- Բանակին անճանազոհաբար նւիրածները պատերազմական ժամանակի ծնունդ են:**

**Պ.-** Չի կարելի այդպէս ասել: Անճանազոհաբար նւիրածների մէջ կան եւ՛ մարդիկ, որ պատերազմի հիմնական ծանրութիւնը իրենց վրայ կրեցին, եւ՛ մարդիկ, որ եկան ատելի ուշ, եւ՛ մարդիկ, ովքեր այս պատերազմի հետ ոչ մի կապ չունեն: Բայց հիմնականում այն տղաներն են, ովքեր կորն իրենց մաշկի վրայ զգացել են:

**Հ.- Կարգազանց սպաների նկատմամբ ինչպիսի՞ պատժամիջոցներ են կիրառում:**

**Պ.-** Նրանք հեռացում են, աստիճանագրկում: Եթէ յանցանքը քրէական է, համապատասխան պատիժ է ստանում:

**Հ.- Ձիւորների հետ ինՖորմացիոն կապ հաստատելու համար զինմասերում արկղեր են տեղադրել նամակների համար: Չէ՞ք վախենում, որ այդ կապի անստորագիր բնոյթը կը վերածի «ղոնոս»-ի:**

**Պ.-** Ամսական 400-500 նամակ են ստանում: Ձիւորների հետ կապը շատ արդիւնաւէտ է: Վստահութիւնը աստիճանաբար մեծանում է: Տարբեր հարցերով են դիմում՝ քիկունքում մնացած ընտանիքների, իրենց սոցիալական կարիքների եւ այլ հարցերով: Իհարկէ, շինծու նամակներ էլ կան, որոնցով շնորհակալութիւն են յայտնում: Բայց ես շատ լաւ ծանօթ եմ բոլոր զինուորներին, եւ կեղծ նամակներն իսկոյն տարբերում եմ: Իսկ ինչ վերաբերում է «ղոնոս»-ներին, ես դրանց ակամեջ կախող մարդ չեմ: Նոյնիսկ քաղաքակաւմութեան մէջ չի կարելի նման ճանապարհով խաբել, էլ ուր մնաց՝ քանակում:

**Հ.- Չէ՞ք ցանկանում կաշառքով քանակից ազատելը օրինակահանցներ, այսինքն՝ թոյլ տալ «փրկագին» վճարել:**

**Պ.-** Դա տարբերակ չէ: Բանակին ոչ թէ փող է պակասում, այլ բարոյականութիւն, արդարութիւն:

**Հ.- Ինչպիսի՞ն է հայկական քանակի պրոՖեսիոնալիզմի վիճակը:**

**Պ.-** Դեռ շուտ է խօսել հայկական քանակի պրոՖեսիոնալիզմի մասին: Մենք ունենք նորմալ քանակ, պրոՖեսիոնալ դառնալու համար այն դեռ էտլիցիա պէտք է ապրի:

**Հ.- Չէ՞ք կարծում՝ ժամանակն է, որ քանակի քանակը վերածի որակի:**

**Պ.-** Ընդհակառակը, որակն է քանակ քերելու: Կրթութիւնը ունեցողների մուտքով քանակի ընդհանուր ինտելեկտը կը բարձրանայ, որը եւ կը հանգեցնի քանակական ուժի:

**Հ.- Հայաստանում լրատուութեան ու գաղափարախօսութեան հարցը ո՞ւմ ձեռքում պէտք է լինի:**

**Պ.-** 1991 թականից այդ հարցը անընդհատ բարձրացում- իջեցում է: Մերոնք սարսափած վախենում էին կրկնել Սովետական Միութեան տխուր օրինակը: Բայց դա նոյնն է,

որ մրսելուց վախենալու պատճառով լողալ չես սովորում: Մենք լուրջ գաղափարախօսութեան կարիք ունենք, եւ պետական մի մարմին: Դա կարելու է յատկապէս հիմա, երբ Դարաբաղեան խնդրի շուրջ մեծ կրքեր են բորբոքելու, եւ հասարակութեանը պէտք է նախապատրաստել: Կարելու է նաեւ Հայրենիք-Սփիւռք միասնութեան գաղափարը, իսկ դա հնարաւոր է միայն ներքին միասնութեան դէպքում: Սփիւռքը ինքն իրեն չի կարող միաւորել: Կենտրոնը Հայաստանը պէտք է լինի, այստեղից պէտք է ղեկավարի պրոցեսը:

**Հ.- Դուք սիրո՞ւմ էք Ֆուտբոլ խաղալ: Գիտէ՞ք՝ կառավարութեան որ անդամից կարող էք պաս սպասել:**

**Պ.-** Այդպիսի անյայտ դէմք չկայ:

**Հ.- Գերադասում էք մենա՞կ խաղալ:**

**Պ.-** Ոչ, ուղղակի կառավարութեան քիմից ես չեմ խաղացել: Ես պաշտպանութեան նախարարութեան քիմում եմ խաղում, մեզ մօտ լաւ Ֆուտբոլիստներ կան :

**Հ.- Ինչպէ՞ս էք վերաբերում կանանց գորակոչին:**

**Պ.-** Մինչեւ վերջերս դէմ էի այդ մտքին, կարծում էի, որ դա միայն տղամարդու խնդիր է: Բայց յետոյ հասկացայ, որ նրանց մուտքը բանակ կը բարիացնի, ատելի բարձր ինտելեկտուալ մակարդակի կը բարձրացնի քանակը, նոյնիսկ որոշ առումով տրդամարդկանց թասիքի կը գցի: Հիմա կան գորամասեր, ուր քիկունքի գծով տեղակալները կանայք են: Վերջերս մրցոյթ յայտարարեցինք կանանց աշխատանքի հրաւիրելու համար: Մօտ 40 հոգի արձագանքեց, սակայն սխալ էին հասկացել. մտածել էին՝ նախարարութիւնում որպէս քարտուղարուհիներ կարող են ձեւակերպել:

**Հ.- Դուք քաղաքակա՞ն գործիչ էք, թէ՞ պետական:**

**Պ.-** Ես ինճ համարում եմ պետական գործիչ:

**Հ.- Հին, դպրոցական ընկերների հետ ինչպիսի՞ կապեր էք պահպանում:**

**Պ.-** Դէ՛, ինչ յարաբերութիւնների մէջ պէտք է լինեն: Նըրանք՝ Արարատում, ես Երեւանում:

Դէ՛, նրանց հետ, ովքեր տեղափոխուել են պաշտպանութեան համակարգ, գործնական շփումներ ունենում են, իսկ, ընդհանրապէս, ժամանակի սղութեան պատճառով կապը մանկութեան ընկերների հետ կորել է:

**Հ.- Խորհրդային շրջանի պիոներական ճամբարները Ձեզ համար դպրոց եղե՞լ են:**

**Պ.-** Ընդհանրապէս սխալ է բացարձակապէս մերժել այն, ինչ եղել է: Ինճ վրայ մեծ ազդեցութիւն է թողել եւ՛ Արտեկի ճամբարը, եւ՛ կոմերիտական աշխատանքի իմ փորձերը: Այսօրայ, բացաման քաղաքակաւմութիւնը շատ սխալ է. եւ դաշնակցականները, եւ՛ կոմունիստները իրենց ժամանակաշրջանում դրական շատ քայլ են արել, եւ այդ լալի մասին, չգիտես ինչու, չեն խօսում: Փաստ է, որ 20-րդ դարը, եթէ եղեմի փաստը մի կողմ դնենք, Աստուած թող ինճ ների, եղել է յաղթանակած դար: Մենք ունեցանք պետութեան վերահռչակում, այնուհետեւ ստեղծեցինք նորմալ մշակոյթ եւ տնտեսութիւն, իսկ դարավերջին՝ անկախ հանրապետութիւն նորմալ քանակով եւ հզօր պետութիւն դառնալու ռէալ հասկանութիւններով ու նկրտումներով:

**Հ.- Դուք բռնկում էք, չէք սիրում անբոխավարութիւնը, կտրուկ էք արտայայտութիւնների մէջ: Դա հոյակապ կեր-**



## «Նոկտեմբերի 27 ...»

**պով շահարկում է ընդդիմութեան կողմից: Չէ՞ք գտնում, որ կայ իմիջմէյքերի խնդիր:**

**Պ.-** Ես երբեք չեմ մտածել իմ իմիջի մասին: Միտում-մատր եմ դրել ինձ այդ վիճակի մէջ, որովհետեւ մեր կարգի կայացող պետութիւններում պէտք է լինեն մարդիկ, որ իրենց վրայ վերցնեն այդ գործը: Իմ տեսակը դա չէ: Դա աւելի շուտ սկզբունք է: Ինչ արել եմ, արել եմ գոռով: Չոռով բանակ եմ տարել, գոռով եռամսեայ գորակոչ եմ արել: Պետմախարար էի՝ անունս դրել էին փեղմախարար: Հիմա էլ վերածել են համազգային բոբոյի: Ժողովուրդը մեղաւոր չէ, ինքս եմ այդ վիճակի մէջ դրել: Պէտք է լինէր մէկը, որ նաեւ դրսի խուժանի հետ կուէր: Վերջերս տեսայ, որ իմ կերպարը նոյնացում է բանակի հետ, եւ չի կարելի իմ կերպարով բանակին վնաս տալ: Հիմա այն, ինչ որ առաջ ուժով եմ արել, ուզում եմ անել սիրով, հասկացողութեամբ, գաղափարով, այսինքն՝ ուզում եմ վերադառնալ իմ ճիշտ ոճին: Ընդ որում, շրջապատը շատ լաւ գիտի, որ ես Հայաստանի բոլոր վարչապետների հետ էլ պրորբեմ չեմ ունեցել, ոչ մի պրորբեմ չեմ ունեցել որեւէ քաղաքական կուսակցութեան հետ: Այդ բացասական կերպարը շատ նրբօրէն շինեց:

**Հ.- Ո՞ր գորավարի կերպարն է ձեզ համար հոգեհարազատ:**

**Պ.-** Դը Գռլի:

**Հ.- Մենք ունենք Դը Գռլ:**

**Պ.-** Մենք դեռեւս կարճ կենսագրութիւն ունեցող պետութիւն ենք, եւ ժամանակներն այնքան յախտն են, որ դեռ վաղ է այդ մասին խօսել: Այդ պետութիւնը հիմա լաւագոյն դէպքում ենթադրում է մտղեհեան կերպարներ:

**Հ.- Գուք գրող էք, թուրք ու գրիչը չէ՞ք կարօտում:**

**Պ.-** Կարօտում եմ: Բայց գործը ծանր է, անընդհատ զբաղւած եմ. բացի անմիջական պարտականութիւններից, ինձ վրայ է նաեւ գաղափարական աշխատանքի կազմակերպումը, ուստի իմ միտքը ազատ չէ: Իսկ գրող մարդու միտքը պէտք է ազատ լինի: Վիլիամ Մարոյեանն ինչոր մէկին հարցրել էր՝ ինչքա՞ն է աշխատում: Պատասխանել է՝ օրւայ մէջ ութ ժամ գրում եմ, յետոյ սուրճ եմ խմում, յետոյ 16 ժամ էլի գրում եմ: Մարոյեանը հարցնում է՝ բայց դու ե՞րբ ես մտածում:

**Հ.- Չէ՞ք կարծում, որ աղանդներին դիմակայելու համար անհրաժեշտ է եկեղեցին, նրա լեզուն հասկանալի դարձնել ժողովրդին:**

**Պ.-** Կարծում եմ: Աղանդաւորութիւնը նոյնքան չեմ հասկանում, որքան չեմ հասկանում դաւաճանութիւնը: Հիմա պատմական թեմայով գրողներ կան, որոնք փորձում են Վլատովին արդարացնել: Ես դա չեմ ըմկալում:

**Հ.- Կողմնակիցներ՞ը ունէք, թէ՞ հետետողներ:**

**Պ.-** Եթէ ուզէի, կունենայի աւելի շատ հետետողներ, քան կողմնակիցներ: Բայց ուզում եմ ունենալ կողմնակիցներ, որոնք նիւրած լինեն ոչ թէ ինձ, այլ այն գործին, որը ես անում եմ: Ես իմ գործին շատ եմ հաւատում, հաւատում եմ նաեւ, որ իմ գործը նորմալ, անշահախնդիր եմ անում:

**Հ.- Ո՞ր միջավայրում էք Ձեզ անհանգիստ զգում:**

**Պ.-** Գրեթէ բոլոր միջավայրերում: Անհանգիստ չեմ զգում միայն, երբ որ մենակ եմ: Դա երեւի գալիս է նրանից, որ հրեշտաւոր շատ շփումներ եմ ունենում, շատ եմ խօսում աշխատանքի բերումով: Կար մի պահ, երբ երազում տեսնում էի՝ ինչպէս երկու մարդ մօտենում են ինձ, եւ վեր էի թռչում այն մտքից, որ պէտք է խօսեմ նրանց հետ: Ես խօսում եմ այնպէս ինչպէս ծանրամարտիկը ծանրածող է բարձրացնում. Ֆիզիկական ճիգեր գործադրելով: Ըստ նրբագաց եմ, ու եթէ, ասենք, մի 100 մարդ հաւաքւած է լինում, մէջքով զգում

եմ կեղծիքը, փոխադարձ անհամակրելի պահերը եւ այդ լիցքը փոխանցում է նաեւ ինձ:

**Հ.- Ինչպէ՞ս էք Ձեր հանգիստը անցկացնում:**

**Պ.-** Կիրակի օրերը, եթէ պատահարներ չեն լինում, սիրում եմ թեմիս խաղալ: Ընդհանրապէս սպորտային մարդ եմ, հանգստի ժամանակ նաեւ Ֆուտբոլ եմ խաղում, լողով եմ զբաղւում: Երբեմն ընդմիջումների ժամերին գնում եմ Կարմիր խաչի լողաւազանը (շատ մօտ է), եւ ընդհամենը 40 րոպէ է պահանջում:

**Հ.- Քանի՞ ամուսնական առաջարկ էք մերժել:**

**Պ.-** Ոչ մի:

**Հ.- Կնոջ իդէալ ունէ՞ք:**

**Պ.-** Ոչ, հէնց ձեւատրիկ, կամուսնանամ:

**Հ.- Ինչո՞ւն է ընտանիքի ամրութիւնը:**

**Պ.-** Ես խորապէս մի ընտանիք եմ տեսել: Իմ հօր ընտանիքը: Ընտանիքում անէն ինչ պէտք է հիմնւած լինի փոխադարձ հանդուրժողականութեան եւ յարգանքի վրայ:

**Հ.- Եկէք խօսենք սիրոյ մասին այդ բառի լայն հասկացողութեամբ:**

**Պ.-** Աւետարանը այդ մասին այնքան գեղեցիկ է ասել. «Առանց սիրոյ ցանկացած գործ նման է ծնծողայի, դատարկ ծնծողայի»: Ինչ ասես, սիրով պէտք է գործես: Եթէ նախարարն իր զինուորին չսիրեց, չյարգեց, չի կարող նախարար լինել, եթէ նախարարն իր անմիջական ղեկավարին չյարգեց չի կարող նախարար լինել:

**Հ.- Օրագիր, յուշեր գրելու ցանկութիւն չունէ՞ք:**

**Պ.-** Ոչ, պաշտպանութեան նախարարը յուշեր գրելու համար չէ, նախարարը պէտք է փորձի ներկան եւ ապագան իր չափով, իր մասով կերտել: Ես երջանիկ մարդ եմ, որովհետեւ այսօր փորձում եմ իրականացնել այն ինչի մասին երազել եմ: Յուշերի կարիք չունեմ:

**Հ.- Յաղթանակի զբօսայգում սոցիալական ի՞նչ զովագդ կը տեղադրէիք:**

**Պ.-** Մեր վիճակում գտնուող ժողովուրդը պէտք է ունենայ կաթսայ, ուր կշաղախեն հասարակութեան բոլոր խաւերը: Այդ կաթսան բանակն է:

**Հ.- Ի՞նչ կարգախօսներ ունէք, որ կուզէիք գրել քաղաքում:**

1- Ամէն ժողովուրդ իր պատմութեան մէջ իր կռիւր գոնէ մէկ անգամ մինչեւ վերջ պէտք է տայ:

2- Իրաքանչիւր ժողովուրդ, լինի 3 միլիոնանոց, թէ 300 միլիոնանոց, միշտ իր միջից կարող է հանել այնքան մարդ, որոնք կարող են երկիրը պահպանել:

3- Պէտք է ուժեղացնել մեր համաշխարհային դիմադրողականութիւնը:

4- Չգիտեմ՝ համաշխարհային՞ն ազգ ենք, թէ՞ ոչ, բայց որ պարտաւոր ենք համաշխարհային գործօճ դառնալ, դա փաստ է:

**Հ.- Ինչպիսի՞ն կուզէիք տեսնել Հայաստանը հինգ տարի յետոյ:**

**Պ.-** Ես կուզէի տեսնել այն շատ կառուցիկ, շատ ինքնուրոյն, ինքնաբաւ, հզօր մշակոյթ, դպրոց եւ բանակ ունեցող երկիր: Մեծ նշանակութիւն եմ տալիս դպրոցին, որովհետեւ նա է հիմքեր ստեղծում: Յաւօք սրտի, այդպիսի դպրոց հիմա չունենք:

**Հ.- Ձեր պատգամը սերունդներին:**

**Պ.-** Ինձ թում է՝ պատգամ գրելու տարիքի չեմ հասել եւ պատգամ գրող մարդու արժանիքներ եւ աւանդ չունեմ: Հիմա, արդեօք, կա՞յ մարդ, որ պատգամ գրելու իրաւունք ունի:

15.09.1997 թ.  
«Չորրորդ իշխանութիւն»



# ԵՒ ... ՄՆԱԿՑ ՈՐՈՒՆԵԼԻ



ՇՈՒՓՈՒՄԷ

Նորին մեծութիւն ժամանակը ծնունդ է իր ընտրեալներին, իր մեծերին, որ դիմանան մոռացութեան որձաքարին՝ չկոտրուեն: Անունները խաղաղօրէն ապրում են կողքկողքի, հաւասարի իրաւունքով, խօսում են ոգիների լեզուով: Ժամանակաչափը նրանց առասպելը վկայագրում է ճշգրտօրէն: Կարէն Դեմիրճեանն այդ անդաստանը մտաւ իր կենսագրութեան անցագրով, որի թանաքը դեռ չի չորացել, չեն դեղնել թղթերը... Եւ մնաց որոնելի...

Գիտեմ, յուշագրութեան համար տարածութիւն է պէտք... Թող ներսի շտապողականութիւնս. սա դիմանկարի փորձ համարի. ծննդեան ծաղկեփունջ՝ ապրողի համար:

Երկիրը ցրտի ու մթան մէջ էր... Արցախ աշխարհում ժամեր էին պայթում: Ամէն օր տեսնում էի նրան, շատ յաճախ՝ մենակ, երբեմն էլ ընկերների հետ քայլելիս: Պատում էր շէնքի շուրջը՝ արագ, մեծ, լայն քայլերով, շտապում էր, շտապում ու տեղ չէր հասնում... Ինքն իր հետ էր: Երբեմն նետում էր կիսավառ սիգարետը, վառում էր նորը, որ էլի նետի... Փայլում կօշիկները երբեք չէին ցեխտում: Նրա կապոյտ, երկար վերարկուն ձուլում էր անճառագայթ խաւարին, դառնում էին իրարամերժ: Կամ էլ պատշգամբից երկար հեռուներն էր նայում տեսանողի մման, բաց ճակատը քամիներին տաժ, ինքն՝ իրենից դուրս...

Պատերազմների մէջ էր... Պայթիւնները՝ նոյնպէս...

\*\*\*

Երբ առաջին անգամ Դեմիրճեանն տանն էի, նրա մշտաբար մերկայութիւնն ամենուր էր, ակնածանքը՝ պարտադրող... Հիւրասենեակի վերին, բարձրադիր աթոռից կախած էր նրա կոստիւմը: Պատերից խօսում էին յայտնի ու անյայտ նկարներ, ժամանակից դուրս եւ ճիշտ ժամանակի մէջ... Գոյների զարմանալի այդ թագաւորութիւնում, ուր վարպետի շնչառութիւնն էր, Տիկին Ռիման մեծարանքով ասաց.

- Կարէնիս աթոռն է...

\*\*\*

Տիկինոջ հետ յաճախ էինք գնում Մարիամ Աստուածածին մատուռը մոտ վառելու...

Առողջականը վատ էր, վիրահատուելու նախորդ օրն ասաց.

- Զգնա՞նք Նորք...

Առաջին մտը վառեց ու մրմնջաց.

- Աստուած իմ, Կարէնիս առողջութիւն տուր: Զար պչից թող հեռու լինի: Պահպանիր նրան...

Վառեց երկրորդը, հինգերորդը, եօթերորդը...

- Օգնիր եւ ինձ, որ ցաւ չտամ նրան...

Երբ դուրս եկանք մատուռից, մտախոհ էր.

- Գիտե՞ս, չեմ ասել, որ վիրահատութեան եմ գնում: Ծանր կը տանի: Յետոյ կիմանայ: Առաւօտն արի ինձ ճանապարհելու: Կարէնը 9-ից գործարան է գնում: Ինձ անց կէսին պիտի հիւանդանոցում լինեմ...

Գնաց... Իմ մէջ վառող մտեր էին...

\*\*\*

Երբ մի մութացիկ ծեծում էր դուռը, տիկին Ռիման ներս էր կանչում, տալիս էր ամենամեծ դրանք, կերակրում էր ու ճանապարհում.

- Կարէնի մայրն ատել է, որ աղ ու հացով մնամ: Հիւրասէր, պատախանդիք, հպարտ կին էր: Սուտ է, թէ վանեցին ժլատ է լինում...

\*\*\*

Երեւի թէ 95 թականն էր: Միւս Կապուտիկեանն ու տիկին Ռիման մեր տանն էին...

- Տղամարդու կեանքում ամենամեծ դերակատարը կինն է: Դժար է ասել ճակատագիրը նրան ուր կը հասցընէր, թէ կողքին չլինէիր դու: Աստուած Դեմիրճեանին ամէն ինչ տել է... Քիչ են այդ մարդիկ, որքան ճգնաժամը խորանում է, այնքան ատելի լաւ են հասկանում Դեմիրճեանին: Մեք «խառով» ենք. լաւ կը լինէր՝ հաշտուէինք... Ճիշտ ինքն էր: Զէր սխալում, որ Կարաբաղը շատ ջուր վերցնող խմոր է եւ իր գրպանում չէ...

Մի քանի օր յետոյ հանդիպումը կայացաւ...

Դեմիրճեանն իր փառահեղ ժպիտով դիմաւորեց Կապուտիկեանին: Երբ խոնջացած բանաստեղծուիկն վայելում էր թէյն ու թերթում ներսի իր յուշագիրքը, Դեմիրճեանը ասաց.

- Ես ժողովրդին հերիք չի՞ խաբես: Դու բոլորովին էլ 76 տարեկան չես... Կապուտիկեանի ծիծաղը ջահէլացել էր...

\*\*\*

Մի կին ամէն օր գալիս, նստում էր դիմացի շէնքի բազրիքին, սպասում էր ժամերով, որ տեսնի Դեմիրճեանին: Անձրեւ լինէր թէ ցուրտ՝ այնտեղ էր: Երբ հռնում էր մեքենան, հեռանում էր երջանակաժպիտ... Անյայտ «եր-կըրպագով» մասին խօսեցինք, տիկին Ռիման ծիծաղեց.

- Մեղք էլ է. «Ժողովրդին տէր կանգնեմք»,- այս էր ա-դերսը: Կարէնը խօսել էր հետը: Խնդրել է, որ չսպասի, որ տուն գնայ: «Պետութիւնը սկսում է տնից»,- ասել է... Բայց ինչ...

Կինը գալիս էր ու գալիս...

\*\*\*

Ինձ տեսնելիս հարցնում էր.

- Հը՞, ինչ կայ, ոնց են գրողները...

- Ամսագիրը ծանր վիճակում է, -ասացի մի օր...

- Վաղը Ափիներանը թող գործարան գայ...

\*\*\*


Տիկին Ռիմանի գերուշադրութիւնը յայտնի էր բոլորին: Ամէն ինչի մէջ սէր ու գորովանք էր դնում: Պէտք էր տեսնել ինչպէս էր ամէն օր վարորդ Միշայի հետ օրապահիկ ուղարկում: Զէր մոռանում անգամ բալի անուշը... Բոլորը փաթեթաւորում էր զեղեցիկ, առանց յոգնելու, հերթակա-նութեամբ:

Վերնաշապիկներն արդուկում էր երկար, անթերի... ինչ մեղքս բացցնեմ... զարմանում էի... Երբ Դեմիրճեան-ը ներս էր մտնում, ես երկար չէի մնում: Հրաժեշտ էի տալիս: Մի օր կշտամբեց.

- Բորո եմ, ինչ է, անընդհատ փախչում ես: Մի քիչ նըս-տիր: Ռիման, քաղցած եմ, բեր պանիր, պոմիդոր, վարունգ, կանաչի:

- Պատրաստել եմ քո սիրած թփով տոլման, - սրտեղեց տիկին Ռիման:

Ծար. տեսնել էջ 11-ում



## Կոլիա Տեր Յովհաննիսեան Բուն անունով Նիկոլա Տեր Յովհաննիսեան,

Ծնել է 1945 թականին, Թարիզում: Մո-վորել է տեղի Հայկազեան-Թամարեան Ազգային հայոց դպրոցում եւ աւարտել միջնակարգի մաթեմատիկայի ճիւղը: Չինտրական ծառայութիւնը Ատրպա-տականի տարբեր շրջաններում գիտու-թեան բանակայինի կոչումով կատա-րելուց յետոյ, անցել է Թեհրան եւ հեռակայ կարգով մաս-նագիտացել տնտեսագիտութեան մէջ՝ ԱՄՆ-ի Շիկագո քաղաքի «Լասել» համալսարանից:



Մկտել է գրել վաղ տարիքից: Նրա առաջին չափածոյ գրածքները լոյս են տեսել «Լուսաբեր» մանկապատա-նեկան ամսագրում: Այնուհետեւ երկար տարիներ աշ-խատակցել է «Ալիք» օրաթերթին: 1973 թ, «Մայթե՛ր, Մայթե՛ր...» բանաստեղծութիւնների ժողովածուն արժա-նացել է Հ.Բ.Ը.Մ-ի «Ալեք Մանուկեան գրական մրցա-նակի բանաստեղծութեան բաժնի» յիշատակութեանը եւ տպագրուել Բէյրութում նոյն հիմնադրամի ծախսով:

Ներկայիս պաշտօնավարում է միջազգային մի ընկերութեան Իրանի մասնաճիւղում, որպէս Ֆինանսի տնօրէն:

### ՕճԻ՛, Յ ԹԵ՛Ն ...

Կար մի ժամանակ,  
երբ սոսկ Հայաստան բառը լսելիս  
հոգիները մեր սփիւքահայի  
տոգորում էին անանց բերկրանքով ու հպարտութեամբ,  
աչքերն՝ կարօտի արցունքով վճիտ...

Կար մի ժամանակ,  
որ հայաստանցու մեզ մօտ տեսնելիս  
ասես աշխարհով մէկ էինք լինում,  
փայփայում էինք, շահում ու պահում,  
ու թաց աչքերով՝  
արդէն կարօտած ճանապարհ դնում:

Կար մի ժամանակ,  
որ սքանչազած ունկնդրում էինք հայ երգն հոգեթով,  
կախարդած ասես,  
հայ աղջիկների պարն էինք դիտում անօթխած, նագուկ,  
խսկ տղաների կրակոտ թափից  
թունդ էր ելնում ողջ էութիւնը մեր՝  
դառնալով համար սեր ու հիացում:

Կար մի ժամանակ,  
երբ մեզ լիարժէք հայ էինք կարծում,  
հայերէն էինք սովորում... թաքում,  
դիմանում էինք յոյսով, հաւատքով...

\*\*\*

...Եւ այդ ժամանակ մեր միջեւ ձգւած

երկաթէ անտես վարագոյրը կար՝  
ծանր ու անքափանց...

Երկաթէ անտես վարագոյրից դուրս լուրերն սփռող  
հրանցում էին մերք հակասական,  
յաճախ ծածկամիտ ու խորհրդատր,  
բայց երանգներով վարդագոյն ինչ-որ...  
խսկ մենք լաւատես միշտ հակած էինք հաւատալու լոկ  
լուրերին... անհիմն, բայց վարդագունած...

...Ու եղաւ այնպէս,

որ հէնց երկաթէ իր ծանրութիւնից  
խորտակեց յանկարծ ու միանգամից  
վարագոյրն անտես...

Ու երբ մաքրեց խորտակման փոշին,  
ամէն բան յառնեց տարբեր լոյսի տակ...

Չկար լոյսերի ծովում շողացող Հայաստանը հին,  
Յուրտ էր ու խաւար,

եւ... Սումգայիթ էր... Մէկ ահ էր, մէկ յոյս,

Բայց ի՞նչ փոյթ,

չէ՞ որ բաց էին բոլոր դարպասները գոց,

վաղուց սպասած մեծ ազատութեան

շեփոյններն էին հնչում բարձրագոյն,

ու տանում էին

ուղիներն բոլոր դէպի Երեւան...

Եւ ցնծութիւն էր մեծ, համազգային

\*\*\*

Եւ եղաւ այնպէս,

որ թաց աչքերով, սրտով բարախում առաջին անգամ

ուտք դրինք հայոց սուրբ հողի վրայ,

երկիւղածօրէն շրթներս հպեցինք

Մայր հայրենիքի քարին սրբատաշ...

Չեկած՝ վերստին գնացինք, եկանք...

Ու տեսանք շատ բան, բաներ այնպիսի,  
ուր ցամաքեցին կարօտի վճիտ արցունքները մեր...

Եւ եղաւ այնպէս,

որ Հայաստանից շատ եկան մեզ հիւր,

եկան, գնացին, գնացին, եկան, եկան՝ մնացին

ու դարձան... նաեւ փոքրամասնութիւն

երբեմն աւա՛ղ, ոչ շատ ցանկալի...

Եւ ընկալեցինք, այն էլ մեծ ցառով,

որ Հայաստանում մեզ ճանաչում են

մեր ապրած երկրով՝

որ մեզ պարզապէս հայ չեն համարում,

որ հայ լինելու մեր փաստի առջեւ

միշտ էլ եղել «ա» յօդակապով մի երկրի անուն...

...Ու մարեց մեր մէջ ոգեւորութեան նախկին հուրն

ծանօթ:

...Եւ եղաւ այնպէս,

որ եղաւ ցնցիչ Հոկտեմբեր ամիս, օրը 27...

\*\*\*

Այժմ, Հայաստան բառը լսելիս

ուրախութեան հետ սրտերն մեր կարօտ

լցում են ինչ-որ խորք ապրումներով...

աչքերը՝ ցաւի արցունքով դառը...

Եւ Հայաստանից այժմ տեսնելիս...

նորից յուզում ենք,

բայց ասես ընդմիշտ մարել է կանչը

մեր նախնիների,

ասես չգտած, կորցրել ենք իրար,

# Մշակոյթ

Ե... մնաց... Շար. էջ 9-ից

դարձել ենք նորից թշուառ ու անտուն...

Հիմա կիսամերկ երգչուհու պչումն  
հայ երգն լսելիս, մնում ենք շարք  
թէ դա որքանով հարազատ է մեզ՝  
բառով հայերէն, էութեամբ օտար...  
Հիմա հիմնաուրց Երեսանը մեր  
պարուրել է ողջ արեւմուտքի պերճ գունեղ շղարշով,  
ու խայտաբղէտ ցուցանակների շողարճակումից  
էլ կապուտակ չէ գիշերը անդորր...  
Հիմա սպիտակ ջարդի մանգաղն է հնձում անխնայ,  
Մեզ քիչ էր ասես Ապրիլ 24,  
երկրաշարժ, աղէտ...  
Հիմա էլ այսպէս գուլիսը վերցրած գնում ենք, գնում...  
Հայից դառնալով... հէզ սփիւռքահայ,  
Սփիւռքահայից՝ ո՞վ գիտէ, թէ ով...  
...Մեր հնամենի վայրերն հարազատ  
այդ ու՞մ են թողնում:

\*\*\*


Օ՛, մեր սիրելի, անու՛շ Հայաստան,  
Ներիր բոլորիս, որ մեղանշում ենք քո դէմ  
Թէ ներսում, թէ դրսում ասա՛ դ,  
Դու որ տեսել ես Արա Գեղեցիկ, Բիւզանդ, Եղիշէ,  
Կոմիտաս, Չարենց, Մեռակ, Բաղդամեան,  
Դեմիրճեան Կարէն,  
Վազգէն Սարգսեան...  
Դու որ կերտել ես վեհ Սարդարապատ,  
Քսանութ Մայիս,  
Այս ու՞ր ես հասել...  
Իսկ մենք քո մասին  
երգեր ենք հիսել  
Հազար յոյսերով, գովերգել ենք քեզ,  
Իսկ հիմա ասիւր ի՞նչը գովերգենք...

Դու երկիրն ես այն,  
ուր հորովելն է հնչել ձի՛զ դարեր,  
որպէս երաշխիք մեր յանրաժողովրդի,  
Դու երկիրն ես այն,  
ուր կայ Մայր Արաքս, Մեռան, Արագած,  
Մասիսի ներքոյ սուրբ Էջմիածին,  
ուր կան մասունքներ բազում, թանկագին  
մեր հին պատմութեան,  
ուր կայ գերութեան շղթաներն պատռած  
յաղթական Արցախ...  
Դու այն երկիրն ես,  
որ ինչ էլ լինես, որ ուր էլ լինենք,  
մեր սերը անհուն քո հանդէպ երբե՛ք,  
երբե՛ք չի մարի...  
Եթէ մինչեւ իսկ այդ սերը մի օր  
մեր սիրտն աւերի...

\*\*\*

Երեկ... ու այսօր...

**Թեհրան,  
Յունիս 14, 2000 թ.**



Դեմիրճեանը մեծ հաճոյքով վայելում էր լուսաշից պատ-  
րաստած փոքրիկ բարութիւնները...

\*\*\*

Ընտրութիւնից առաջ տիկինն անհանգիստ էր.  
- Կը տեսնես, Կարէնս այս ժողովրդի մատաղն է լինելու: Չէի  
ուզում քաղաքական դաշտ մտնէր: Չկարողացայ հա-մոգել,  
զգացի, որ արգելելու իրաւունք՝ չունեմ: Կարծում է դեռ կարելի է  
փրկել վիճակը: «Ժողովուրդը,- ասում է,- չի ների, թէ ձեռքերս  
ծալած նստեմ: Դեռ կան ելման կէտեր»: Անվերջ  
վերածնունդների մէջ է: Հազիւ էինք գտել իրարու: Կորցրել ենք  
մեր գրոյցները: Միակ երանութիւնը մնացել է թէյի սեղանը, որը  
մեզ իր շուրջն է հաւաքում:

\*\*\*

Ազգային ժողովի նախագահ էր Դեմիրճեանը, մի օր հարցրի.  
- Ինչպէ՞ս է Ռիման...  
- Ինչ իմանամ, դու ասելի շատ ես տեսնում նրան: Պիտի, որ  
լաւ լինի...

Քիչ էր տանը լինում... «Էն օրերի» պէս քայլում էր մտա-խոն,  
արագ, առանց անձնական փիկնապահների, վստահ ու  
արքայավայել:

\*\*\*

Ուշադիր էր շրջապատի նկատմամբ: Հարեանների հետ  
ճեպընթաց գրոյցը պարտադիր էր...

Աւանդապահ էր... Նրան դուր չէին գալիս ծխող կա-նայք:  
Արտառոց հագուստները համարում էր անբնական:  
Քայլում էի ես... Աշխատում էի, որ ինձ չնկատի: Մի օր  
բարկացաւ.

- Էս ուշ ժամին ի՞նչ ես անում փողոցում: Տուն գնա՛: Էլ  
գիշերները քեզ դրսում չտեսնեմ:  
Սպասեց մինչեւ արագ-արագ իջայ աստիճաններով:  
Երեւի թէ շիկնել էի...

\*\*\*

Թաղման արարողութիւն էր: Դեմիրճեանը յանձնաժողովի  
մէջ էր: Գնում էր գլուխը բարձր, առանց մեզ նկատելու: Տիկին  
Ռիմայի աչքերին նայեցի...

- Դժար չէ՞ ապրել անհատակութեան հետ:  
- Նաեւ երջանկութիւն է:  
Ես գիտէի, որ անտարբերութիւնը թացեալ է, որ Դեմիրճեանը  
տանը ուշադիր էր բոլորի նկատմամբ: Ամենա-փոքր բռնուհու՛  
Կարիճէի հետ խաղում էր ինքնամոռաց:  
- Աշակերտ Կարէն, ոտքի,- երբ պարտադրում էր «ուսուց-  
չուհին», նա հնազանդում էր: Սպասում էր Կարիճէի նոր  
հրահանգին...

\*\*\*

Յաճախ եմ տեսել Դեմիրճեանին երկար, գծաւոր տնա-յին  
խալաթը հագին, ինքնամոռաց, մի քիչ սովորականից բարձր  
Բերիովեմ, Բախ, Մոցարտ լսելիս:

- Առաւօտեան սպորտային վարժութիւններն անգամ դասկան  
երաժշտութեան տակ է կատարում, - պատմում է տիկին  
Ռիման,- էլ գրքերի մասին չեմ խօսում: Լուսամփոփը երբեմ  
խանգարում էր ինձ, թէպէտ՝ հակառակն էլ էր պատահում:  
Ասում էր.« Երանելի ժամանակներ դեռ կը գան, կը տանենք մի  
խաղաղ անկիւն գրքեր, երաժշտութիւն, կը կը-տըրենք մի  
աշխարհից: Կապրենք նրանց հետ տխուր: Ասելիք- գրելիք շատ  
ունեն»: Ինքնամփոփ էր դարձել:

\*\*\*

Մոսկայից բերել էր մի արկղ տխուր երաժշտութիւն:  
- Էլ տեղ չկայ դնելու,- սրտնեղեց տիկին Ռիման...

Մի քանի օր անց, երբ սզոյ ժապաւեճի մէջ չէր տեղա-  
ւորում Դեմիրճեանի նկարը, հնչում էր մեղեդին, ջութակը  
լաց էր լինում, նրա հետ ժողովուրդը, որը մէկ անգամ ես  
ցնցեց, սահմուկեց, խոնարհեց պետական դրօշը եւ ձեռքերի  
վրայ տարաւ իր Նահապետին մեր մեծերի վերջին հան-  
գրուանը... ■

## Մշակոյթ

ԾՅ ԿՅՇ ԳՅ ԳՅՇ  
 ԾՅ ԽՅ ԵՅ ԳՅ ԵՇՇՅ  
 »՛՛. ԳՅՇՇՇՇՇՇՇՇ  
 ՇՇՇՇ



### Ը.- Կը խնդրենք ներկայանալ:

**Պ.-** Սուգաննա Մարգարեան. Ծնել եմ 1962 թականին: Սկսել եմ երգել վաղ տարիքից: 16 տարեկանում ունեցել եմ իմ առաջին համերգը՝ 1978 թականի մայիսի 14-ին: Այս տարի լրացաւ իմ գործունէութեան 22 տարին: Սկսել եմ «Սերունտի ոկագործիքային անսամբլում», որը շատ հանրաճանաչ էր ժամանակին: Յետագայում երբ 19 տարեկան էի հրաւեր ստացայ «Հայաստանի Պետական Էստրադային» նագախմբի գեղարուեստական ղեկավար՝ Կոնստանդին Օրբելեանի կողմից: Երկար տարիներ աշխատել եմ այդ նագախմբում: Ի դէպ ասեմ, որ շատ երիտասարդ տարիքում եմ այդ հրաւերն ստացել, որ նման դէպք համարեալ չէր եղել: Յետագայում եւ մինչեւ այսօր աշխատում եմ որպէս Հայաստանի ազգային ռադիոյի սիմֆոնիկ էստրադային մեներգչուհի: Շրջագայել եմ բազմաթիւ երկրներում, ունեցել եմ մենհամերգներ, ձայնագրել եմ Հայաստանի երգահաններից բազմաթիւ երգեր, որոնք յատկապէս ինձ համար են գրել: Այժմ աշխատում եմ իմ կարծիքով մի շարք հրաշալի երգերի վրայ:

### Ը.- Ինչպէ՞ս եղաւ, որ մուտք գործեցիք երաժշտական ասպարէզ:

**Պ.-** Շատ փոքր տարիքից եմ երգել, իհարկէ ես իրականացրի ծնողներիս երազանքը: Նրանք շատ արւեստասէր էին եւ մանկութիւնից տարբեր ժանրերի արւեստը մեր ընտանիքում առկայ էր: Հայրս՝ նկարչութեան, մայրս՝ երգարւեստի, ծնողներս միասին՝ պարարւեստի, տատս՝ թատրոնի չափազանց սիրահարներ էին: Այնպէս որ իմ ապագան այլ կերպ չէր կարող դասատուել: Եւ տատիս երազանքն էր, որ ես դառնամ օպերատային թատրոնի դերասանուհի, բայց մինչ ես աւարտեցի տասնամեակը՝ այդ Ֆակուլտետը փակւեց: Այդ պատճառով էլ ես չդիմեցի, չնայած մինչ այդ արդէն սկսեցի երգել «Սերունտի»-ում, ուր ինձ ուղարկեցին ծնողներս: 16 տարեկանում ծնողներիս ուղեկցութեամբ գնացի «Սերունտին» եւ ընդգրկուեցի ոկագործիքային անսամբլ, որտեղ անմիջապէս աշխատանքի անցայ: Մայաւրօ Կոնստանդին Օրբելեանը նոյնիսկ առանց որեւէ քննութեան ինձ վերցրեց այդ նագախմբի կազմում: Այն ժամանակ դա մի անմախմբաց երետոյք էր: Այդպէս սկիզբ առաւ ամէն ինչ: Իմ յաջողութեան համար երախտապարտ եմ ծնողներիս, եւ յատկապէս հայրիկիս:

### Ը.- Ինչո՞ւ ընտրեցիք էստրադային երգի ճնշ:

**Պ.-** Համերգի ժամանակ ասացի, որ ես փոքրուց մեծացել եմ ժողովրդական երգի միջավայրում, որովհետեւ մայրս ժողովրդական երգի կատարող էր, բայց էստրադային երգը միշտ ներքուստ ինձ մէջ է եղել եւ ես ժամա-

նակին հետեւում էի այդ օրայ եւ ժամանակի էստրադային երգիչներին, եւ ծածուկ սկսել էի երգել էստրադային երգեր եւ արդէն 13 տարեկանում հսկայակական էստրադային երգերի ծրագիր ունէի: Բայց յետագայում այնպէս դասատուեց, որ ոչ միայն էստրադային, այլ շատ ուրիշ ժողովրդական երգեր էլ կատարում եմ:

### Ը.- Հայաստանի անկախութիւնից յետոյ նկատում է հայկական արւեստի աղաւաղում: Դուք անձամբ ի՞նչ կարծիք ունէք:

**Պ.-** Այդ ժամանակաշրջանը նաեւ ազդեցութիւն ունեցաւ արւեստի վրայ: Առաջին ցաւալի պատճառը այն էր, որ շատ կարկառուն դէմքեր մեկնեցին Հայաստանից, որոնց բացակայութիւնը զգալի եղաւ, նամանաւանդ՝ Կոնստանդին Օրբելեանի բացակայութիւնը: Երբ խառնաշփոթ վիճակ է տիրում երկրում, սկսար ուժերը չգիտես ինչու տեղ են գտնում, եւ այդպէս էլ ստացեց: Բեմերը ւցեցին անորակ երաժշտութեամբ: Տարօրինակ բան կատարեց: Տաղանդաւոր մարդիկ չունեցան այն հնարաւորութիւնները, որպէսզի այդ նոր պայմաններում, նոր կարգերում ստեղծեն իրենց տեսահոլովակները եւ կատարեն իրենց նոր ձայնագրութիւնները: Իհարկէ դրանք ժամանակաւոր բնոյթ են կրում, ինչպէս այդ ժամանակաւոր երկրի վիճակն էր: Մենք ունենք շատ տաղանդաւոր երիտասարդներ, որոնք աստիճանաբար ոտքի են կանգնում: Արդէն քայլեր են առնում, այնպէս որ կարծում եմ համարեալ շրջանցեցինք այդ վատ վիճակը:

### Ը.- Ասում է,- Արւեստը ժողովրդի միջազգային լեզուն է, -սակայն ումանք այլ կերպ են ընկալում այդ, եւ միանգամայն թողնում են ազգային արւեստը: Իմ կարծիքով դա շատ վրտանգատոր բան է: Դուք ի՞նչ կարծիք ունէք:

**Պ.-** Ես չգիտեմ դրա վտանգը ինչի՞ մէջ է: Եթէ արւեստը համարում է միջազգային լեզու, ապա դա միակ ուժն է, որ կարող է ազգերի շփման եւ ծանօթութեան առիթ հանդիսանալ: Երբեք ամենալաւ հայ ինժեները չի կարող որեւէ բանով իր ազգը ներկայացնել արտասահմանում, որքանով որ կարող է մի արւեստագէտ անել այդ: Ես դրա մէջ վտանգ չեմ տեսնում: Եթէ ուզում ես ազգը ներկայացնել՝ լիովին ներկայացնում ես քո արւեստով: Ես երբեմն արտասահմանում երգեր եմ երգում եւ այդ երգերը ուղղակի աչքեցնում եմ օտար հանդիսատեսին: Նրանք չեն պատկերացնում, որ այդ երաժշտութիւնը հայկական է: Ուրեմն սկսում են մտածել թէ ի՞նչ խոր արմատներ ունի իմ ազգը: Դա է հէնց ապացոյցը: Արւեստը պիտի ստեղծի այդ կապը ազգերի միջեւ:

### Ը.- Թերեւս այս հարցը չվերաբերի Զեզ: Այնուամենայնիւ ցանկալի է Ձեր կարծիքը իմանալ: Արդեօք արւեստը չի՞ խոչընդոտում Ձեր ընտանեկան կեանքը:

**Պ.-** Ոչ, լրիւ ընդհակառակն է: Մենք ծանօթացել ենք այն ժամանակ, երբ արդէն համբաւ ունէինք, եւ էլ, ամուսինս էլ ի սկզբանէ համուզած ենք եղել, որ ես պիտի իրեն օգնեմ եւ ինքը ինձ: Գիտէք ինչ, շատ-շատերը չեն կարողանում ընթրնել այդ եւ մի քիչ դժուար է արւեստագէտների համար միատեղ կեանք, այդ ամէնը ես էլ, ամուսինս էլ քաջ գիտակցում ենք: «Խանդ» կոչուածը մենք շատ սիրով



## Մշակոյթ

շրջանցում ենք: Ես միշտ մէջբերում եմ Լարուշկոյի խօսքերը որ «Միտոյ մի տեսակ կայ, որ բարձրագոյն դրսեւորման մէջ վանում է խանդը»: Այնպէս որ մենք միայն օգնում ենք ինքներս մեզ՝ մեր արւեստում: Առաւել հիմա մեզ գումարել է մեր աղջիկը, որը արդէն պակաս անուն չի ներկայացնում իրենից, այսինքն պահանջում է հաշի նստենք իր եւ իր արւեստի հետ:



**Լ.- Ինչպէս ասացիք Ձեր աղջկան նաեւ պիտի տաղանդատր երգչուհի համարել: Դուք անձամբ որպէս արւեստագէտ ի՞նչ կարծիք ունեք նրա մասին:**

**Պ.-** Այո՛ հարցի շուրջ շատ մեծ սիրով կը խօսեմ եւ խօսում եմ որպէս մասնագէտ, ոչ որպէս մայր: Հաւատացեք, եթէ ես չհանձնուի, որ ինքը լիակատար կը տիրապետի այդ արւեստին, երբեք չէի թողնի բեմ բարձրանալ: Ես ինքս էլ ունեցել եմ ուսանողներ, որոնց խորհուրդ եմ տւել զբաղուել ուրիշ աշխատանքով: Այսպէս, որ ես սեփական երեխայիս չէի կարող սխալ խորհուրդ տալ: Գոյութիւն ունի երաժշտական ռիթմիկ, լսողութիւն, ձայնային տեսակներ, որոնք բոլորը լիակատար են նրա մօտ: Իսկ եթէ նա նոյնիսկ երգչուհի չդառնար, լաւ երաժիշտ՝ անպայման կը դառնար:

**Լ.- Այսպէս մի անձնական հարց տամ: Ինչպէ՞ս էք ծրագրում Ձեր տան գործերը: Արդեօք տանը լա՞ւ տնտեսուհի էք:**

**Պ.-** Հա, լաւ առիթ է գրուի գովելու: Շատ էլ լաւ տնտեսուհի եմ: Ամէն ինչ փորձում եմ հասցնել: Իհարկէ օգնող ունեմ, բայց հիմնականում չեմ ընդունում, որ ուրիշ որեւէ մէկը մեզ համար ճաշ պատրաստի: Ես խոհանոց շատ եմ սիրում: Մայրիկիս խօսքերից մէջբերում եմ անում, որ ասում էր,- Բալիկ ջան, ուրիշ երեխաները բանաստեղծութիւններ են գրում, դու խմորեղէնի ռեցեպներ ես գրում:

**Լ.- Ձեր ամուսինն էլ մասնակցո՞ւմ է տնային աշխատանքներին:**

**Պ.-** Հայեացքով անշուշտ:

**Լ.- Այսօր թե՛ Հայաստանում թե՛ Իրանում արտագաղթ գոյութիւն ունի: Ի՞նչ կատք այդ ցաւալի երեւոյթի մասին:**

**Պ.-** Այո ցաւալի է, իսկապէս ցաւալի է: Իրանահայերի արտագաղթի մասին ես տեսակէտ չեմ կարող յայտնել, բայց Հայաստանից արտագաղթը բոլորիս ցաւն է: Քիչ առաջ, որ ասացի շատ բնագաւառներ տուժում են՝ գիտութիւնը, արւեստը եւ... ակնառու մարդկանց բացակայութեան պատճառով: Վերականգնելուց յետոյ չգիտես քանի՞ սերունդ պիտի մեծանայ, որպէսզի մնան մասնագէտներ ծնի: Իսկ դա նշանակում է անկման սկիզբ, վտանգատր երեւոյթ է, դէմ եմ, բայց չեմ կարող մեղադրել ժողովրդին: Ամէն մարդ գտնում իր կեցութիւնը այնտեղ՝ որտեղ գտնում է իր հացը:

**Հ.- Այդ երեւոյթը կանխելու համար կոնկրետ Դուք, որպէս հայ արւեստագէտ առաջարկ չունե՞ք:**

**Պ.-** Ես ժողովրդին որեւէ առաջարկ չեմ կարող տալ: Ես ոչ միայն առաջարկում՝ այլ պահանջում եմ իմ երկրի ղեկավարներից, որպէսզի ստեղծեն գոնէ համեատ պայմաններ, որոնց շնորհիւ ժողովուրդը չլքի երկիրը:

**Լ.- Ի՞նչ տպաւորութիւն ունեք Իրանահայերի եւ ընդհանրապէս սփիւռքահայերի մասին՝ առանց պահածքի:**

**Պ.-** Ես հէնց այդպէս էլ կը պատասխանեմ: Իմ 22 տարիների շրջագայութիւնը, իր արդիւնքը տւել է, այն որ՝ սփիւռքում այնքան շատ մտերիմներ ունեմ, եւ Թեհրանում էլ դա փաստեց: Հէնց առաջին պահից մտերմացայ եւ շատ սիրեցի այն տանտիկնոջը, որի յարկի տակ հիմա ապրում եմ: Սիրեցի բոլոր դիմատրոդներին: Նոյնիսկ ինձ համար շատ յուզիչ էր եւ շատ հաճելի, որ իմացայ անծանօթ մարդիկ եկել էին օդակայարան մեզ դիմատրեյու: Գիտեք, դրա մէջ քաղցր բան կայ: Այդ մեր արիւնն է բոլորիս իրար կապում: Չեմ ուզում դրօշ բարձրացնել, բայց երեւի թէ արմատներով հայրենասէր եմ եւ շատ շնորհակալ եմ իմ ճակատագրից, որ ինձ կապեց սփիւռքահայութեան հետ: Հաստատ եթէ այդ կապը չունենայինք, կեանքում ինչ որ բան պակաս կը լինէր:

**Լ.- Եթէ կան հարցեր եւ նրանց առնչող պատասխաններ, որոնք մեր հարցերում բացակայում են, կը խնդրենք արծարծել:**

**Պ.-** Ես, կարծում եմ հարցերը լիովին տեղին էին, միայն աւելացնեմ, որ շատ ուրախ եմ այս ուղեւորութեան համար: Կազմակերպիչներից շատ շնորհակալ եմ, որոնք առիթ ընծայեցին, որպէսզի ծանօթանանք իրանահայ համայնքի հետ:

**Լ.- Սիրելի Սիրուշօ, այժմ խօսքը տրւում է քեզ: Պատմիր աշխատանքիդ, տպաւորութեանդ եւ մի խօսքով ինչի մասին որ կուզես:**

**Պ.-** Արւեստի աշխարհ եմ մտել 8 տարեկանից: Հիմա 13 տարեկան եմ: Փոքրուց մեծացել եմ արւեստի միջավայրում, քանի որ հայրս դերասան է, մայրս՝ երգում է: Մայրիկիս հետ մեկնել եմ համերգներ, հայրիկիս հետ մասնակցել եմ ներկայացումների: Ես նոյնպէս սկսեցի երգել, ինձ համար ինչ-որ տեղ ծանօթ զգացում էր դա: Շատ հաճելի էր իհարկէ, քանի որ աւելի մօտիկից ճանաչեցի բոլորին, սկսեցի մեկնել տարբեր քաղաքներ ու երկրներ, երգել եւ ծանօթանալ նոր մարդկանց հետ:

**Լ.- Ինչպէս ասացիր, հայրդ դերասան է: Արդեօք թատերական արւեստը քեզ չի՞ հրապարել:**

**Պ.-** Ամերիկա մեկնեցիս: Յետոյ մայրս եկաւ, վերջում էլ հայրս: Բոլորով հաւաքեցիք այնտեղ: Հայրս եկել էր Դրամատիկ Թատրոնի հետ, որտեղ նրանք ներկայացրեցին մի քանի ներկայացումներ, որոնցից էր «Ըն վերջին հանգրուանը», որի մէջ ես էլ խաղացի մի փոքր դեր: Շատ եմ սիրել թատրոնը: Մանկուց կարելի է ասել հայրիկիս ոչ մի ներկայացումը բաց չեմ թողել եւ միշտ ուզում էի լինել բեմում: Այնպէս որ «Ըն վերջին հանգրուանը» ներկայացման մէջ ես մասնակցեցի նաեւ երբ վերադարձանք Հայաստան: Մասնակցել եւ նկարահանել եմ նաեւ կինոյում: Այդ կինոն նկարահանեց մեր Ամերիկա գնալուց առաջ: Ի դէպ չեմ տեսել վերջնական պատկերը, բայց երեւի շուտով դուրս կը գայ Երեւանում՝ եւ կը տեսնեմ: Վերջում կը ցանկանայի կատարելալ յաջողութիւն մաղթել ձեզ: Սփիւռքեան պայմաններում հայ մամուլ հրատարակելը բարձր գնահատանքի է արժանի: ■

**Շարքագրոյցը վարեցին՝  
Վաչիկ Վարդանեանը  
եւ Թամիկ Բեշիշեանը**

# Մշակոյթ

¼ô² ðÂ ÛàòÆ ä °ÔàòØÛ°ðÆ 100 î ² ðÆÛ

## Արամ Բալանթարեան ԸՇ ՉԱՍ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի տնօրէն, պատմական գիտութիւնների դոկտոր

Զարթոնցի Ներսեսաշէն տաճարը դարակազմիկ նշանակութիւն ունի հայ ճարտարապետութեան, արւեստի ուսումնասիրութեան համար ոչ միայն ազգային, այլեւ համաշխարհային չափանիշներով: Տաճարի ուսումնասիրութեան հիմքի վրայ հայկական ճարտարապետութեան տեսութեան ու պատմութեան մշակումը հայ մշակութային կեանքի նշանաւոր երեւոյթներից է:


Երեք արժանայիշատակ անձնաւորութիւնների հետ է կապուած Զարթոնցի տաճարի հիմնադրումը, վերակենդանացումը եւ փառքի տարածումը: Դրանք են՝ Ներսէս Գ կաթողիկոս, Թորոս Թորամանեան, Խաչիկ վարդապետ Դադեան:

7-րդ դ. 40-60-ական թթ. Ներսէս Գ կաթողիկոսը, որն իր գործունէութեան համար ստացել է «Շինարար» մականունը, Վաղարշապատի մօտ կառուցում է մի հոյակապ տաճար՝ Առապարի Ս. Գրիգոր եկեղեցին՝ Զարթոնց անունով: Այս իրադարձութիւնը փաստագրուած է VII եւ յետագայ դարերի բոլոր պատմիչների երկերում: Ներսէսաշէն եկեղեցիներն ունեցել են կլոր յառակազիծ, ճիւղ յարդարանք եւ եղել են բազմաբարձ: Յայտնի շինութիւններն են Գառնիի, Բանայի եկեղեցիները, Դիմի Ս. Սարգիսը (յայտնաբերուած չէ, կան ճարտարապետական մանրամասները): Ներսէս Գ կաթողիկոսի շնորհիւ հայ հոգեւոր ճարտարապետութեան մէջ մուտք գործեց նոր շունչ, որն ազդեցութիւն ունեցաւ ճարտարապետական տարբեր դպրոցների վրայ: Դրա ամենամիայրուն արտայայտութիւնն է Անիի Գագկաշէն եկեղեցին:

Հաւանաբար X դարում Զարթոնցը փոխ է եկել երկրաշարժից (կան կարծիքներ, որ եկեղեցին քանդել են արաբները): Նրա տեղում առաջացել է մի բլուր, որը դարձել է վաղարշապատցիների ամասունների արօտավայրը: XIX դ վերջին հետաքրքրութիւնը Զարթոնցի նկատմամբ մեծանում է: 1890-ին Էջմիածին է ժամանում արք.տրդացի հանրայայտ գիտնական, ճարտարապետ, պրոֆ. Ֆեոդոր Ե. Ստրժիգովսկին եւ ճեմարանի առաջ տեսնում է զամբիւղածն չորս խոյակներ՝ բերած Առապարից: Այս հանգամանքը միտք է տայիս երիտասարդ հոգեւորական Մեսրոպ Տէր Մովսիսեանին (Մագիստրոս, յետագայում յայտնի պատմաբան, քանասէր), 1893 թ. պեղումներ կատարել Ս. Գրիգոր եկեղեցու տեղում, սակայն շուտով դադարեցնում է՝ թույլատրութիւն չունենալով:

Զարթոնցի պեղումների նախապատրուէները միշտ տրուել եւ տրուում է Խաչիկ վարդապետ Դադեանին: Ծագումով արցախցի, քահանայի ընտանիքից սերած, Արցախի նշանաւոր վանքերում հոգեւոր պաշտօններ վարած, Պարսկաստանի առաջնորդական փոխանորդ, Էջմիածնի թանգարանապետ, Զարթոնց Ս. Գրիգոր եկեղեցու վանահայր Խաչիկ

Դադեանն ապրել է գիտաստեղծագործական բուն կեանքով: Հնագիտութիւնը, վիճագրութիւնը, ազգագրութիւնը, բանասիրութիւնը առաջնային դեր են կատարել նրա հետաքրքրութիւնների շրջանակներում, առաջին հերթին ընդգրկելով Արցախ աշխարհը, Պարսկաստանը: Նա ձեռնամուխ է լինում հայ հին ձեռագրերի հաւաքմանը, որի շնորհիւ Էջմիածնի Մատենադարանը հարստանում է 300 ձեռագրերով՝ Խաչիկ Դադեանի նիւթատութեամբ: XIX 80-ական թթ. նա պեղումներ է կատարում Արցախում (նիւթերը յետագայում բերում են Էջմիածին), 1904-1908թթ.՝ Դիմում, Գառնիում, Արմաիրում, Եղարքում, յետագայում Օշականում, Աղջոց Ս. Ստեփանոս վանքում, Խաթունաբխում (Ե. Լալայեանի հետ) եւ այլուր: Խաչիկ վարդապետ Դադեանի հնագիտական աշխատանքների մէջ բացառիկ են Զարթոնց տաճարի պեղումները՝ շուրջ երկու տասնամեակ տեւողութեամբ: 1900թ. մայիսին, նախապէս ստանալով Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակն ու Ռուսաստանի կայսերական



հնագիտական յանձնաժողովի արտօնագիրը, Դադեանն սկսում է յուշարձանի հետազոտական աշխատանքները: Արդէն յունիսին, առաջին յաջողութիւնների հետ միասին, յայտնաբերում են նաեւ Հայաստանի վաղ շրջանի պատմութեանը առընչող նիւթեր: Գտնում են Ուրարտուի Ռուսաց II թագաւորի շինարարական արձանագրութիւնները, որը հրատարակում է հայագէտ Կ. Բասմաջեանը հայերէն եւ Ֆրանսերէն:

Պեղումների արդիւնքներն այնքան խոստումնալից էին եւ հազեցած տաճարի շրջակայ պալատների հետ առնչում նիւթերով, որ Զարթոնցի վրայ է սեւեռում հայ եւ օտար գիտական ու հասարակական

շրջանների հետաքրքրութիւնը: Պարբերա-բար հաղորդումներ են տպագրում հայ եւ օտար մամուլում: Ս. Տէր Մովսիսեանը 1903 թ-ին կայսերական հնագիտական յանձնաժողովի տեղեկագրում հրապարակում է ռուսերէն առաջին յօդուածը Զարթոնցի պեղումների, նրա ճարտարապետական յօրհնածքի, կառոյցի առանձնայատկութիւնների մասին: Յօդուածը տը-պագրում է Դադեանի կազմած զեկույցների, չափագրութիւնների եւ լուսանկարների հիման վրայ:

Զարթոնցը դառնում է ուխտավայր Հայաստան այցելած հիւրերի, գիտնականների, պետական ու մշակութային գործիչների համար: 1900թ. Դադեանի համար տաճարի նիւթերի չափագրութիւնը կատարել է յայտնի նկարիչ Ա.Ֆեթաւեանը: Յօդուած գրելու առիթով 1901թ. Զարթոնց է այցելում գրող Վ.Փափագեանը: Երկրաշարժից բզկուած տաճարն այնքան վեհ էր իր քանդակներով, ճարտարապետական մանրամասնութիւններով, որ նոյնիսկ աներակ վիճակում խոր տպաւորութիւն էր թողնում: Զարթոնցի նման տաճարի վերայայտնագործութիւնը նպաստեց նաեւ դարասկզբին ազգային ինքնագիտակցութեան եւ ինքնահաստատման գաղափարների վերելքին, ինչպէս նաեւ հայ մշակոյթի դերի ու նշանակութեան բարձրացմանը համաշխարհային գիտա-կան, հասարակական շրջանակներում: 1904-ից Խաչիկ վարդապետ Դադեանի հետ սկսեց համագործակցել ճարտարապետութեան նիւթեպ Թորոս Թորամանեանը, որն արդէն աշխատում էր Անիում, ակադեմիկոս Ն. Մառի հետ:

Շաբ. տեսնել էջ 16-ում

## Համակարգիչը հայերեն է կարդում, սրբագրում և վերարտադրում

Արտեմ Սարգսեանի ղեկավարած խմբի գիտական նւաճումը



Արտեմ Սարգսեան՝ բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի խմբի վարիչ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, չորս մենագրութեան, 70-ից ւաւելի գիտական յօււածների, մի շարք թարգմանութիւնների, երկու բառարանների (արեւմտահայերէնի բառարան՝ արեւելահայերի համար, եւ արեւելահայերէնի բառարան՝ արեւմտահայերի համար) հեղինակ: 18 տարի ազգային հեռուստատեսութեամբ վարում էր «Մեր լեզուն, մեր խօսքը» սիրւած հաղորդաշարը, դասախօսում էր Բրիտանի անւան օտար լեզուների ինստիտուտում, Երեւանի պետական համալսարանում: Խ. Արովեանի անւան մանկավարժական ինստիտուտում, նաեւ Կիպրոսի Մելքոնեան կրթական հաստատութիւնում եւ Երուսաղէմի հոգեւոր ճեմարանում (համապատասխանաբար՝ 8 եւ 4 տարի):

**- Պրն. Սարգսեան, վերջերս մեզ յայտնի դարձաւ, որ Ձեր ղեկավարած գիտնականների փոքրիկ խումբը, այսպէս ասենք, «համակարգայնացրել» է մեր լեզուն, նրա բառագանձը: Սա իսկապէս գիտական, նաեւ տեխնիկական նւաճում էր, որի մասին, աւաղ, մեր հասարակայնութիւնը սպառիչ տեղեկութիւններ չունի: Գիտական լեզվից պարզ-մարդկային լեզվի, «թարգմանած» ի՞նչ է դա նշանակում:**

- Միջազգային մի շատ լուրջ կազմակերպութիւն՝ օբիւնկերութիւնը, մոսկովեան իր գրասենեակներից մէկի միջոցով մեզ առաջարկ ներկայացրեց համակարգիչների համար ստեղծելու հայոց լեզվի «գործանաչման» ծրագիր: Սա մի համակարգ է, որը հնարարութիւն է տալիս ոչ միայն ճանաչելու մեր տառերն իրենց արտաքին ձեւով, այլեւ համակարգիչի յիշողութեան մէջ պահելու մեր լեզվի ամբողջ բառագանձը՝ իր քերականութեան ենթահամակարգչով: Բազմամիլիոն ձեւեր՝ իւրաքանչիւր բառի համար. այդ բառի փոփոխման բոլոր տարբերակները, սկսած յոգնակիի ձեւերից, տարածութիւններից: Ինչո՞ւ է սա պէտք: Որպէսզի հնարարութիւնը լինի, այսպէս կոչւած, «սքան» անելու ժամանակ, երբ ուզում ես որեւէ տեքստ համակարգիչ մտցնել, ոչ թէ հաւաքես, ինչպէս գրամեքենայով է արւում՝ տառ առ տառ, այլ միանգամից ամբողջ էջը պահես համակարգիչի դիսփլէյի վրայ, եւ համակարգիչն ամբողջն ակնթարթօրէն մտցնի իր յիշողութեան մէջ: Սա հնարարութիւն է դառնում ոչ միայն այն պատճառով, որ համակարգիչը «ճանաչում» է մեր բոլոր տառերը, այլեւ՝ բառերը: Աւելին, համակարգիչը կարողանում է տարբերել ճիշտ եւ սխալ գրւած բառերը: Առաջ անցնելով ասեմ, որ աշխատանքի բարեխաղող աւարտից եւ ԱՄՆ-ում փայլուն գնահատական ստանալուց յետոյ, երբ Երեւանում մեր ստեղծած համակարգչային ծրագրի շնորհանդէս էր, պատահական մի էջ բերեցին, եւ մեր սարքը ոչ միայն բոլորի աչքի առաջ այդ տեքստը մուտքագրեց, այլեւ յայտնաբերեց սխալները: Սրանք այնպէս է ծրագրարտուած, որ տեքստը

մուտք գործելիս եթէ յայտնաբերւում է որեւէ բառ, որը չկայ իր յիշողութեան մէջ, այդ բառը կապոյտ է ներկւում: Կապոյտ է ներկւում նաեւ այն բառերը, որոնց ճիշտ գրութեանն ինքը կասկածում է: Տեւալ դէպքում 2 բառ կապոյտ ներկեց, եւ երկուսն էլ մեքենագրական սխալ էր: Օրինակ, «ժանրապետութիւն» բառը տեքստում «ժանրապետութիւն» էր գնացել, եւ մեքենան անմիջապէս դա ներկեց ու յայտնաբերեց:

**- Այսինքն, դա նաեւ մի իւրայատուկ սրբագրի՞չ է:**  
- Այո, միանգամայն ճիշտ է:  
**- Ծրագիրն ստեղծելիս ու՞րքո՞ւ էին Ձեր գործընկերները:**  
- Մեր աշխատանքային խմբի մէջ էին տասնեակ տարիների ընկերս՝ բանասիրական գիտութիւնների թեկնածու Ռոբերտ Թոխմախեանը, ծրագրարտող Անժելա Մանուկեանը, համակարգչային յատուկ հմտութիւնների տէր Արեգ Ասատրեանը եւ օբիւնի մոսկովեան գրասենեակի փոխտնօրէն Արամ Փախչանեանը: Ըստ էութեան, այս ծրագիրն իրագործելու բախտը մեզ վիճակեց հենց շնորհիւ Արամ Փախչանեանի: Այդ նա էր օբիւնի ղեկավարութեան մէջ յանձնառել կատարելու այս աշխատանքը:

**- Իսկ ինչի՞ց էլնելով պատուէր տրեց հենց Ձեր ղեկավարած գիտնականների խմբին:**

- Այդ հարցը պրն. Փախչանեանին շնորհանդէսի ժամանակ էլ տրեց: Ինքն ասաց, թէ իբրեւ մոսկովայաբնակ գիտնական՝ քաջատեղեակ էր «Մեր լեզուն, մեր խօսքը» հեռուստատեսային հաղորդաշարին, նրա 700-ից ւաւելի թողարկումներին: Ուրախ եմ, որ մենք պրն. Փախչանեանին յուսալապ չարեցինք: Մէկ տարւայ ընթացքում մեր փոքրիկ խումբը գրաբարի, արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի շուրջ 400 հազար բառ, այսինքն՝ հայերէնի հիմնական բառագանձը, մուտքագրեց համակարգիչ: Կազմեցինք մեր լեզվի երեք վիճակների ձեւային նկարագրութիւնը համակարգչի համարում այնպէս, որ նա դա ընկալի: Սա հնարարութիւն էր որչա՞նչ խմբի մեծ նւիրումի շնորհիւ:

**- Հե՛շտ էր համակարգչի «լեզուն» հասկանալը կամ, ւաւելի ճիշտ, համակարգիչն ինքը ձեզ հե՛շտ էր հասկանում:**

- Համակարգիչը ձեւական-մեխանիկական մօտեցում ունի, «մտածող» էակ չէ: Եւ նա մեզ յանախ այնպիսի հարցումներ էր ուղղում, որը մարդը, գիտնականը երբեք չէր տայ: Օրինակ, նա մեզ հարցնում է՝ ցոյց տուէք ամականի համեմատական աստիճանները: Մենք պատասխանում ենք՝ «լաւը» դրական աստիճան է, «ւաւելի լաւը» բաղդատական, «ամենալաւը»՝ գերադրական աստիճանը: Համակարգիչը հարցնում է՝ իսկ ի՞նչ է «լաւագոյնը»: Ասում ենք՝ դարձեալ գերադրական աստիճան է: Այդ դէպքում ի՞նչ է «ամենալաւագոյնը» բառածելը, հարցնում է համակարգիչը: Եւ պէտք է նրան բացատրել, որ «ամենալաւագոյնը» սխալ է, բայց տարածւած սխալ է: Եւ այս դէպքում համակարգիչը բոլոր տեքստերում «ամենալաւագոյնը» բառին հանդիպելով՝ կապոյտ կը ներկի, ձեր ուշադրութիւնը հրաւիրելով այդ սխալի վրայ, մի տեսակ յուշելով, որ ուղղէք:

**- Ձեր ստեղծած համակարգը, ծրագիրը կատարեա՞լ է:**

- Վերը ես ասացի, որ մենք համակարգչարտել ենք շուրջ 400 հազար բառ, կամ մեր հիմնական բառագանձը: Որպէսզի մեր ծրագիրը կատարեալ լինի, պիտի ներառի ողջ բառագանձը: Այս իմաստով նա դեռ լրացման կարիք ունի: Մենք պիտի շարունակենք աշխատանքը: Նպատակն այն է, որ համակարգչարտի հայոց լեզուով ստեղծւած ողջ գրականութիւնը:

**- Իսկ դա գործնականում մեզ ի՞նչ կը տայ:**

-Պատկերացրէք, համակարգիչը կարող է ակնթարթաբար վերականգնել մեր ողջ գրականութեան մէջ օգտագործւած բառերի ուղիղ ձեւերը, դասատրի այբբենական կարգով:

# Գիտական

Եւ պարզի, թէ ո՞ր բառերն օրինակ, չկան մեր բառարաններում: Ընտրիւ այս համակարգի, մենք շատ շուտով կունենանք հայոց լեզուի լիակատար շտեմարանը: Այս կերպ կարող ենք ասել՝ ահա գրաբարի ամբողջ բառամթերքը, ահա արեւելահայերէնի եւ ահա արեւմտահայերէնի բառամթերքը: Այլ ժամանակներում սա նոյնիսկ Աճառեանի ու միւս հսկաների համար հրաշքի պէս մի բան կը լինէր, որովհետեւ նրանց հիմնական տառապանքը, կոնկրետ բառարանագրութեան մէջ, եղել է քարտագրումը, որ երկար տարիներ է տեսել: Հիմա նիւթ հաւաքելը, խմբատրելը, բառերի դուրսգործումն անում է համակարգիչն ակնթարթների ընթացքում: Օրինակ, ես գիտնականների գիտեմ, որ ամիսներով մատել հաշիւ են, թէ ասենք, «ուրիմ» անհայտ բառի մասին ունի հայերէնը: Այժմ հարկ չկայ դրա համար ոչ միայն կէս տարի, այլեւ կէս բուլի կորցնելու. սեղմում ես կոճակը, եւ համակարգիչը քեզ տալիս է «ուրիմ» անհայտ ունեցող բոլոր ցանկը:

- **Ասենք թէ ինձ անհրաժեշտ է իմանալ հայերէնի անկանոն բայերը:**

- Համակարգիչը ձեզ անմիջապէս կը տայ ամբողջ շարքը:

- **Այդ դէպքում լեզուաբան գիտնականները կորցնո՞ւմ են իրենց «արժեքը»:**

- Ամենեւին: Համակարգիչը պարզապէս անում է «սեւ» գործը, տառապալից գործը: Գիտնականներին մնում է նորմատրել, կանոնակարգել լեզուն: Օրինակ, այդ մենք պիտի որոշենք՝ ո՞ր ձևն է ճիշտը՝ «Լոռույ», «Լոռիի», թէ՛ «Լոռու»: Համակարգիչը մեզ անմիջապէս կը յուշի, թէ «Թումանեանն ասում է «Էն Լոռու ձորն է...»: Բայց նաեւ՝ «Լոռայի հին աղաքներից», «Լոռիի մարզպետարանը» եւ այլն: Այսինքն, համակարգիչը մեր առաջ կը փոխի հայերէնի բոլոր բառածները: Իսկ երբ մենք նրա յիշողութեան մէջ դնենք նաեւ այն գծապատկերը, թէ մեզ՝ գիտնականներին համար ո՞ր բառածներն է աւելի նախընտրելի, դրանից յետոյ նա բոլորից կը պահանջի հէնց այդ բառածները, միւսները դարձնալ կապոյտ կը ներկի, կը յուշի, որ դա նախընտրելի չէ արդի հայերէնի լեզուն տածողութեան համար: Իսկ գիտէ՞ք դա ի՞նչ է նշանակում: Բոլոր խմբագրութիւնները, բոլոր ուսումնական հաստատութիւնները, գրադարանները, բիբլիոթեկային կենտրոնները կունենան հասարակ մի դիսկետ, որի օգնութեամբ իրենց յուզող բոլոր հարցերի պատասխանները կարող են ստանալ: Երանք, իհարկէ, կարող են ընդլզել համակարգիչի «թելադրած» այս կամ այն բառածելի դէմ, բայց դա արդէն մեր լեզուի զարգացման արդի փուլի հետեւանքն է:

- **Այսինքն, Ձեր մշակած ծրագիրը «յուշում» է, թէ մեր լեզուաբանութեան, բառագիտութեան, ձեռագրութեան ո՞ր հարցերը դեռեւս գիտական սպառիչ պատասխան չունեն, ի՞նչն է թերի, ինչի՞ վրայ կենտրոնացնել գիտնականների ուշադրութիւնը:**

- Այո, եւ նորից այո: Այս համակարգը գիտնականների համար ստեղծագործական պրոպոսիցիաների անսպասելի արդիւն է բացում:

- **Կունկրետ «Ազգի» խմբագրութիւնը Ձեր դիսկետներից ե՞րբ կը ստանայ:**

- Ոչ միայն «Ազգի», այլեւ միւս բոլոր խմբագրութիւնները, ուսումնական հաստատութիւնները, լեզուագիտական կենտրոնները շատ շուտով այդ դիսկետները կը ստանան, երեւի մէկ ամսից դրանք լրի կը լինեն: Եւ կը ստանան միանգամայն անվճար, իբրեւ նւէր: Աշխատանքը կատարելիս մենք այդպիսի պայման ենք դրել abb-i-ի ղեկավարութեան առաջ: ■

**Չարքանցի... Զար. էջ 14-ից**

Թորամանեանը մանրամասն ուսումնասիրում է տաճարի ճարտարապետական յօրհնածքը, կառուցի սկզբունքները եւ տալիս է վերակազմութեան նախագիծը, որը գիտական շրջանառութիւն է ստանում: Արդէն 1905թ-ին լոյս է տեսնում վաստակաշատ ճարտարապետի՝ տաճարին նկարած անդրանիկ աշխատութիւնը:

Դա Թ. Թորամանեանին հնարաւորութիւն ընձեռնեց խորացնել եւ ամբողջացնել հայոց ազգային ճարտարապետութեան համար անկիւնաքարային նշանակութիւն ունեցող Չարքանց տաճարի շինութեան տեսութիւնը:

Խաչիկ Դադեանը դառնալով վանահայր՝ քարեգործում է Չարքանցի շրջակայքը, հող նախապատրաստում թանգարանի հիմնադրման եւ գտնուած նիւթերի ցուցակագրման համար:

Տարօք, Խաչիկ Դադեանի կատարածը եւ նրա գիտական ժառանգութիւնը չեն գնահատել ըստ արժանւոյն: Մասնագիտական գրականութեան մէջ շատ հպանցիկ ներկայացել են միայն Խ. Դադեանի աշխատանքի թերութիւնները, որոնք ունէին իրենց օրէնկտի պատճառները: Օրինակ՝ Չարքանցում, ըստ Դադեանի, անփոփոխած պէտք է լինէր Գրիգոր Լուսաւորչի աճիւնը, որի գերեզմանի որոնումների ժամանակ երբեմն խախտում էին յուշարձանի որոշ հատածներ: Բացթողումներ կան նաեւ հնագիտական նիւթերի փաստագրման խնդիրներում:

Դադեանին երբեմն մեղադրել են ազգային ասանդութիւնների ու սրբութիւնների դէմ մեղանշելու մէջ, գրել են պարսաւայից եւ վիրատրական յօդածներ: Իշխանութիւնները երեք անգամ բանդարկել են Դադեանին. 1904թ.՝ Չարքանցում կամաւորական զնդի «Մահ կամ Ազատութիւն» նշանաբանով դրօշակ օձելու եւ Չօրավար Անդրանիկին ուղարկելու համար, 1917-ին՝ քաղաքական մեղադրանքով եւ 1927-ին՝ հասօրինական եւ սխալ պեղումներ կատարելու համար: Բայց, այնուհանդերձ, Խաչիկ Դադեանի գործունէութիւնը քարծր են գնահատել ժամանակակիցները: Հայաստանի պետական կենտրոնական արխիւում պահպանել են նամակներ, որոնցից արժէ մէջբերումներ կատարել՝ գնահատելու Դադեանի գործը:

Վ. Փափագեանը 1900 թ. նոյեմբերին գրում է. «Այնքան ուրախ եմ, որ պատմութեան մէջ անուն պիտի թողնես, Երեւան հանելու VII դարու այս հրաշալի եկեղեցին»: 1907 թ. նամակում Մեսրոպ վարդապետը գրում է Բեռլինից. «... Եթէ դու գերմանացի ծնած լինէիր եւ այդ քրտինքներդ Գերմանիայի համար թափէիր, դեռ կենդանութեանդ արձանդ կը կանգնեցնէին... Ինչքան էլ իբրեւ մարդ ունենաս թերութիւններ, նոյնիսկ աւելիք քան մենք «արդարներս», էլի քեզ գնահատել չենք կարող»: Արեւմտահայ յայտնի հասարակական եւ մշակութային գործիչ Դեմոստր Տօնապետեանը 1914-ին գրում է. «Չարքանց Խաչիկի հետ ապրող աշխարհական նաեւ եկեղեցական ժամանակագիրները մոռացութեան կը մատնեն ասպազ սերնդից, մինչդեռ Չարքանց հրաշափառ աւերումները, որքան ժամանակ որ շարունակեն գոյութիւն ունենալ ի տես մարդկանց, իրենց վրայ բարձրացրած պիտի պահեն Խաչիկ վարդապետի անունը իբրեւ վեհաձայն իսկ խաչն»:

Կեանքի վերջին տարիները Խաչիկ Դադեանն անց է կացրել առողջական եւ նիւթական ծանր պայմաններում: Հոգեպէս նրան ընկճել է նաեւ անբարեացական պաշտօնական եւ քաղաքական միջավայրը: Վախճանւել է 1936 թ-ին՝ 73 տարեկանում եւ, ըստ բանաւոր վկայութիւնների, թաղուել Էջմիածնի Ս. Գայեանէ վանքի գերեզմանատանը: ■

**«Ազգ» օրաթերթ  
Ռաֆիկ Յովհաննիսեան**



## Ի՞նչ Ե՞ս

### Հայաստանի Ֆրանսիական Համալսարանը «Սկրուել Է» Ապրելու և Բարգաւաճելու Համար



Երկարատև ջանքերից, գիտութեան և լուսատրութեան, հայ երիտասարդ սերնդին 21-րդ դարի կեանքին մասնակից դարձնելու պայքարով ոգեշնչած՝ Հայաստանի հողի վրայ ի վերջոյ հաստատուեց Ֆրանսիական համալսարանը:

Արդէն իսկ փառաշուք կառոյցը մտնեց ի իր արարտին ու ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի ձեռամբ՝ բացուեց կատարուեց պաշտոնապէս 18 յուլիսի 2000 թ.-ին: Իսկ դասընթացների սկըսման արարողութիւնը տեղի է ունենալու 18 սեպտեմբերի 2000 թ.-ի՝ առաւօտեան ժամը 10-ին: Համալսարանի ծրագրերի յաջողութեան համար իր նպաստը բերեց նաև Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան դեսպան Վոլկեր Չայթցը, որը սերտօրէն համագործակցում է Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրայի հետ՝ Հայաստանի մշակութային, գիտական ու տնտեսական օգնութիւնների ծրագրերի իրականացման հարցով: Անշուշտ, հայկական կողմը՝ ներկայացած Արթուր Բաղդասարեանով, ՀՀ Ազգային Ժողովի պատգամատը, նորաբաց համալսարանի վարչական խորհրդի նախագահը, ծրագրի իրաւաբանը: Հաստատութեան տնօրինութիւնը վստահել է Ընտան Ըահրագեանին, որը լինելով ՀՀ արտաքին յարաբերութիւնների բաժնի տնօրէն՝ ստանձնել է այս ոչ նազ թային պաշտօնը... Ֆինանսական օգնութեան հարցերով շնորհակալ դեր է խաղում յայտնի գործարար Սամել Բեգլարեանը:

Ուսումնական ծրագրերի վերահսկողութիւնն ու վաւերացումը՝ իրականացնելու է Լիոնի առեւտրական բարձրագոյն դպրոցի կողմից, որը միջազգային մեծ փորձ ունի: Ուսանողները սովորելու են չորս տարի, երկու տարին նրանք հաշտապահութեան, հարորդակցութեան, «Մենեջմենտ» - ի և «Մարքեթինգ»- ի հիմունքներ ու սովորելու և հմտանալու են իրաւաբանութեան ու լեզուների ուսուցման ինտենսիւ պարապմունքների հետ: Մնացեալ երկու տարիներին նրանք մասնագիտանալու են առեւտրի «Մարքեթինգի» - ի, ինչպէս նաև հաշտապահութեան - «Մենեջմենտ» ի մէջ՝ իրենց նախընտրութեան համաձայն:

Ֆրանսիական կողմը իր վրայ է վերցնում երրորդ ուսման շրջանի կրթաթոշակների յատկացումը՝ առաւել արժանատր ուսանող- ուսանողուհիներին՝ կեցութեան հարցերով ծախսերով Հայաստանում և Ֆրանսիայում: Լիոնի առեւտրի և արդիւնաբերութեան գրասենեակը ապահովում է դասախօսների կազմը Ֆրանսիայում և Հայաստանում, երբեմն յատուկ մասնագէտների միջամտութեամբ: Լեզուների ուսուցումը վերահսկում է դեսպանութեան կողմից, իսկ տեղեկատրութիւնը՝ Ֆրանսիայի համագործակցողի կողմից:

Որովհետև ծրագիրը հիմնականում կանխատեսել էր լինելու Ֆրանսա-գերմանական, ապա գերմաներէն լեզուի դասընթացներ իրականացում են բացման օրից սկսեալ Հայաստանի DAAD – ի համագործակիցների կողմից:

Ֆրանսիական Համալսարանի առաջին տարւայ դասընթացների սկսման նախօրէին՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրայի ու դեսպանութեան անձնակազմի հետ այցելում ենք նորակառոյց շէնքը: «Երիտասարդացած» հանրապետական մարզադաշտի կողքին, «Դինամօ» մարզադահլիճի հարեանութեամբ, առեւտրաարդիւնաբերական բանուկ շրջանում, որտեղ ծրագրում է կառուցել հիւրանոց՝ արտասահմանցի ուսանողների համար: Ֆրանսիայի ու Հայաստանի դրօշներով զարդարած մուտքի մօտ մեզ է դիմաւորում Համալսարանի վարչական խորհրդի նախագահ, ՀՀԱԺ պատգամատը, Համալսարանի ծրագրի իրաւաբան Ա. Բաղդասարեանը:

«Համալսարանի առաջին փուլը յաջողութեամբ աւարտեց՝ յանձնեցին ընդունելութեան քննութիւնները: Մեծ հետաքրքրութիւն կայ համալսարանի նկատմամբ: Հայաստանից բացի 4 երկրներից – Ռուսաստան, Վրաստան, Իրան և ԱՄՆ ուսանողներ ունենք: Յուսանք, որ Ֆրանսիայից նաև ուսանողներ կը լինեն...»

Համալսարանի գլխատըր Ֆինանսատրումը իրականացում է Ֆրանսիական իշխանութիւնների կողմից որը ներկայացնում է ամբողջութեամբ Ֆրանսիայի դեսպանութիւնը: Նիթական ապահովումը՝ հայ և Ֆրանսիայի ներդրողների և պետական մարմնի՝ յատկապէս կրթութեան և գիտութեան նախարարութեան կողմից: Ուսանողների 20 տոկոսը անվճար է սովորելու, գերազանց սովորողները՝ անվճար...: Իսկ վարձը, որը տարեկան կազմում է 700 ԱՄՆ դոլար, շատ աւելի էժան է երոպական և ամերիկեան համալսարաններից» բացատրում է Արթուր Բաղդասարեանը:

Իսկ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան՝ մեծ յայտը է կապում կրթութեան այս նոր օջախի նկատմամբ:

«Մեր գլխատըր նպատակը այս համալսարանի հիմնադրման մասնակցութեան՝ այն էր, որ հայ շրջանաւարտ ուսանողին աշխատանք ապահովել իր ուսումնական տարիների արարտից յետոյ: Մենք կենտրոնացրեցինք մեր ջանքերը՝ անհրաժեշտ ու խիստ պահանջարկ ունեցող միջազգային ու հայկական շուկայի վրայ՝ մասնագիտութիւնների վրայ, ինչպիսիք են «մարգետինգ»-ը, հաշտապահութիւնը, գործարար կապերն և օրէնսդրութիւնը: Մենք հասանք այն եզրակացութեան, որ չենք կարող աշխատել այն հին օրէնքներով, որոնք արդէն արդիական չեն: Մենք այս նպատակով ընտրեցինք դասախօսական կազմը, որպէսզի կարողանանք ուսանողութեանը փոխանցել այն գիտութիւնը, որն անհրաժեշտ է կեանքում յաջողութեան հասնելու համար: Ցանկացողները կարող են իրենց ուսման ծրագրի արարտից յետոյ Հայաստանում, մասնագիտական բարձրագոյն ուսումը շարունակել Ֆրանսիայում: Սփիւռքի այն ուսանողներին, որոնք ցանկանում են սովորել Ֆրանսիական Համալսարանում, կարող են հարատրիացնել, որ ուսումնական մակարդակը չի գիճում Ֆրանսիայում գոյութիւն ունեցող մակարդակին...»:

Այսպիսով, Հայաստանի համար դժարին այդ ժամանակաշրջանում, երբ հայրենալքութիւնը լայն չափսեր է ստացել՝ Ֆրանսիական համալսարանը գալիս է խոր արմատներ գցելու հայրենի հողում: Այն լինելու է գիտութեան և կրթութեան լուստը կամուրջ Հայաստանի և Սփիւռքի գաղթօջախների ու երոպական 21-րդ դարի քաղաքակրթութեան հետ:

*Ըանօ Սուկոֆեան  
Երևան*

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

1978թ. ապրիլի 14-ին ՀԽՍՀ ԳԽ արտահերթ եօթերորդ նստաշրջանը ընդունում է ՀԽՍՀ Նոր Սահմանադրությունը, որով ՀԽՍՀ ԳԽ լիազորությունների ժամկետը 4 տարուց փոխում է 5 տարայ, իսկ դեպուտատների քանակը հասցում է 340-ի:

1980թ. փետրվարի 24-ին եւ 1985թ. փետրվարի 26-ին տեղի ունեցան ՀԽՍՀ ԳԽ տասներորդ եւ տասնմեկերորդ գումարումների ընտրությունները: Ընտրողների թիւը համարեա հասել էր երկու միլիոնի: Ինչպէս միշտ, այս ընտրությունների մասին Կենտրոնական ընտրական յանձնաժողովի հաղորդագրութեան մէջ ընտրությունների մասնակիցների թիւը նշւած էր 99,99 տոկոս:

1988թ. սկսւած Գարաբաղեան շարժման հետեւանքով ԳԽ սկսում է գումարել արտահերթ նստաշրջաններ, որտեղ սկսում է քննարկել ոչ տրադիցիոն հարցեր, 1989թ. ԳԽ կազմում ընտրում են ընդդիմադիր ուժերի առաջին ներկայացուցիչներ:

1990թ. մայիսի 20-ին տեղի է ունենում ՀԽՍՀ ԳԽ տասներկուերորդ գումարման ընտրությունները, որը առաջին անգամ անցնում է բազմակուսակցականութեան սկզբունքով եւ դեպուտատական մէկ տեղի համար պայքարում են տարբեր կուսակցությունների՝ հիմնականում ՀԿԿի եւ ՀՀԸ-ի ներկայացուցիչներ:

1990թ. յուլիսի 20-ին բացւեց ՀԽՍՀ ԳԽ տասներկուերորդ գումարման առաջին նստաշրջանը, որը ընդունեց Անկախութեան հռչակագիր:

ՀԽՍՀ Կենտրոնականի նախագահներ են եղել Սարգիս Համբարձումեանը (1922-1925թթ.), Արտաշէս Կարինեանը (1925-1928թթ.), Սարգիս Կասեանը (1928-1931թթ.), Արմէն Անանեանը (1931-1933թթ.), Սերգո Մարտիկեանը (1933-1936թթ.), Գեորգ Հանեսողեանը (1936-1937թթ.):

ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահներ են եղել Խաչիկ Յակոբջանեանը (1938-1943), Աղասի Սարգսեանը (1943-1944), Սիմակ Սահակեանը (1944-1961), Էդւարդ Թովչեանը (1961-1971), Ռուբէն Պարսամեանը (1971-1972), Արծրուն Գասպարեանը (1972-1975), Սերգէյ Համբարձումեանը (1975-1980), Սամսոն Տոնոյեանը (1980-1990), Լեւոն ՏերՊետրոսեանը (1990-1991), Բարկէն Արարքեանը (1991-1995):

ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահութեան նախագահներ են եղել Մացակ Պապեանը (1938-1954), Շըմաւոն Առուշանեանը (1954-1963), Նազուշ Յարութիւնեանը (1963-1975), Բարկէն Սարկիսովը (1975-1985), Հրանտ Ոսկանեանը (1985-1990):

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ (ԽՈՐՀՐԴՂԱՐԱՆԻ) 1991-1996թ. ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

1990թ. մայիսին տեղի ունեցան Հայաստանի Գերագոյն Խորհրդի ընտրությունները: Հիմնականում ընտրա-

պայքարը Հայաստանի կոմունիստական կուսակցութեան եւ հիմնական ընդդիմադիր ուժի՝ Հայոց համագալին շարժման (ՀՀԸ) միջեւ էր: Ժողովրդական զանգուածների համակրանքը ընդդիմութեան կողմն էր, որի ղեկավարութեամբ ազատագրական պայքարի էր ելել: Սակայն մի շարք օբյեկտիւ եւ սուբյեկտիւ պատճառներով պատգամաւորների մեծ մասը կոմունիստներ ընտրեցին: Չնայած դրան, 1990թ. օգոստոսին, նորընտիր Գերագոյն Խորհրդի նախագահ ընտրեց ՀՀԸ նախագահ Լեւոն ՏերՊետրոսեանը: Դա ազատագրական պայքարի ելած ժողովրդի կարեւոր նաճումն էր, որով փաստօրէն աւարտեց հայկումկուսի մենատիրութեան ժամանակաշրջանը:

1990թ. օգոստոսի 23-ին, Հայաստանի Գերագոյն Խորհրդի առաջին նստաշրջանը ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին», որով վերացեց Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը եւ հաստատեց Հայաստանի լիիրաւ անկախ Հանրապետութիւնը: «Հայաստանի Հանրապետութիւնը, նշւած է այստեղ, ինքնիշխան պետութիւն է՝ օժտւած պետական իշխանութեան գերակատարութեամբ, լիիրաւութեամբ, Հայաստանի Հանրապետութեան ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնն ու օրէնքները»: Սա անկախութեան գործընթացի սկիզբն էր, որը յետագայում ամրապնդեց նորանոր օրէնքներով ու որոշումներով, Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի որոշմամբ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքիւ անցկացեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու եւ անկախ պետականութիւն հաստատելու մասին: Հանրապետութիւնում քիւրակութեան իրաւունք ունեցողների 94,3%ը դրականօրէն պատասխանեց այդ հարցին: Երկու օր անց Հայաստանի Գերագոյն Խորհուրդը հանրապետութիւնը հռչակեց, որպէս անկախ, ինքնուրոյն պետութիւն: Դա Հայաստանի երրորդ Հանրապետութիւնն էր, որը ծնեց բաւականին բարդ եւ ծանր պայմաններում: Հանրապետութեան նորահաստատ իշխանութիւնները պետական շինարարութեան հետ մէկտեղ հարկադրւած էին մեծ ջանքեր գործադրել Արցախի ազատագրական պայքարին օգնելու, բռնահանած հարկիւր հազարաւոր փախստականներին տեղաւորելու, 1988թ. դեկտեմբերեան աւերիչ երկրաշարժի հետեւանքները վերացնելու համար:

Անկախութեան հռչակագրի հիմնադրոյթներից ելնելով Հայաստանի Գերագոյն Խորհուրդը միջոցառումներ էր մշակում փոփոխող հասարակական եւ տնտեսական յարաբերութիւններին համապատասխան շուկայական յարաբերութիւններին անցնելու համար: 1996թ. սեպտեմբերին Գերագոյն Խորհուրդը օրէնք ընդունեց Հայաստանի Հանրապետութեան պետական սեփականութեան մասին, որով հանրապետութեան տարածքում գտնող բոլոր պետական ձեռնարկութիւնների եւ հիմնարկութիւնների ունեցւածքը հաստատում էր Հայաստանի Հանրապետութեան սեփականութիւն:

## Ըարցազրոյց՝

### à ñáü »ëáñ ² Ý¹ ñ³ ÝÇİ Úáí³ ë³ ÷ »³ ÝÇ

#### հետ



Ուրախութեամբ տեղեկացանք, որ աներիկաբնակ (ծնունդով իրանահայ) անւանի պրոֆեսոր Անդրանիկ Յովասափեանը ժամանել է Իրան՝ հարազատներին տեսնելու նպատակով: «Լոյս» երկշաբաթաթերթը առիթը յարմար գտնելով մի հարցազրոյց կազմակերպեց յարգելի պրոֆեսորի հետ, որը ներկայացնում ենք ստորև:

**Հ.- Յարգելի Պրոֆեսոր նախ կը խնդրենք ներկայացնել Ձեր կենսագրութիւնը, եւ տեղեկացնել Ձեր մասնագիտութեան մասին:**

**Պ.-** Ծնել եմ 1935 թ. Իրանի Արաք քաղաքում, տարրական եւ միջնակարգ ուսումն ստացել եմ նոյն քաղաքում: 1950 թւականին Շիրազի համալսարան եմ ընդունել եւ ուսումն շարունակել բժշկական ճիւղում եւ 1962 թ. դոկտորայի տիտղոս եմ ստացել: 1963 թ. մեկնել եմ ԱՄՆ Պենսիլւանիա համալսարանում «Ուշագնացութեան» մասնաճիւղը սովորելու: 1965 թ. կրկին վերադարձել եմ Իրան եւ աշխատել Շիրազի համալսարանում՝ որպէս դասախօս: 1969 թ. ընտրել եմ նոյն ամբիոնի վարիչ: Շիրազի համալսարանում վեց տարի աշխատելուց յետոյ՝ 1974 թ. մեկնել եմ Ամերիկա եւ Շիկագո քաղաքի «North Western» համալսարանում ստանձնել պրոֆեսորի տիտղոս՝ 1982 թ.: 1998 թ. թողել եմ «North Western» համալսարանը եւ միացել «The University of Chicago» համալսարանին ստանձնելով նոյն պաշտօնը: 1974 թ. մինչ այսօր բժշկական աշխատանքներից բացի՝ բազմաթիւ դասախօսութիւններ եմ ունեցել եւ հետազոտական աշխատանքներ կատարել:

**Հ.- Յարգելի պրոֆեսոր կը խնդրենք բացատրեք «Յովասափեան air-way» գործիքի մասին:**

**Պ.-** Այս «air-way»-ը (Շնչառութեան ճանապարհ) գործիքը պատրաստուած է պլաստիկ նիւթից եւ գործածուած է այն հիւանդների համար, որոնք ունեն անբնական շնչառութիւն : «air-way»-ը փոխարինում է մի այլ յատուկ գործիքի, որը կոչուած է «Ֆայթր փիթիք բրանքըքսփ»: Դրանց միջոցով խողովակ է անկացուած հիւանդի շնչափողի մէջ եւ այսպիսով բնական շնչառութեան հնարաւորութիւն է ստեղծուած: «air-way » գործիքը գործածուած է այդ գործը դիւրին դարձնելու համար: Գործիքը արձանագրուել է իմ անունով եւ գործածուած է գրեթէ աշխարհի բոլոր երկրներում: Դա շատ թեթեւ գործիք է եւ միեւնոյն ժամանակ շատ օգտակար:

**Հ.-Ներկայումս ի՞նչ աշխատանքով էք զբաղուած: Արդեօք որեւէ գրական աշխատանք ունեցե՞լ էք:**

**Պ.-** Առաջին գիրքս հրատարակեց 1990 թ. նոյն շնչառութեան թեմայով: Այս գրքում «Ֆայթր փիթիք բրանքըքսփ» գործիքի մասին, եւ յատուկ տեխնիկայով եւ նրկարներով ներկայացրել եմ այն: Երկրորդ գիրքս հրատարակեց 1996 թ., որը աւելի ծաւալուն է եւ իր մէջ է ընդգրկում 1990- 1996 թթ. կատարած նորութիւնները եւ կարելի է ասել առաջինի լրացուցիչ տարբերակն է: Երրորդ



գիրքս լոյս կը տեսնի 2001 թ. յունւարին: Բացի գրքերից ունեցել եմ 41 գիտական յօդւածներ եւ գրել եմ 46 տարբեր գրքերի նախաբաններ եւ 28 զանազան գրածք-ներ:

Ամերիկայում կայ գիտական պարգեւներ, որոնք ստանում են համալսարանի պրոֆեսորները եւ «Visiting» պրոֆեսորները: «Visiting»

պրոֆեսորները նրանք են, որոնք տարբեր համալսարանների կողմից հրաւիրուած են դասախօսելու համար: Նրանք պետք է այնքան բարձր գիտելիքներ ունենան, որպէսզի իրենց ելոյթներով եւ դասախօսութիւններով կարողանան նոր բաներ եւ տեղեկութիւններ ներկայացնել: Ես մինչ այժմ ամերիկեան 55 առաջնակարգ համալսարանների՝ Կոլումբիա, Եյլ, Շիքագո, նաեւ մի շարք այլ երկրների՝ Շեցարիա, Շեդիա, Ֆինլանդիա, Քովէյթ, Հարաւային Աֆրիկա, Թուրքիա, Հայաստան, համալսարանների կողմից հրաւիրել եմ դասախօսելու՝ որպէս «Visiting» պրոֆեսոր: Պարգեւատրուել եմ նաեւ Իլինոյ նահանգի «Ուշագնացութեան» միութեան կողմից: Այս պարգեւը շնորհուած է այն մասնագէտներին, որոնք համաշխարհային համբաւ են ձեռք բերել եւ մի ինչ որ աշխատութեամբ զարգացրել են ուշագնացութեան գիտութիւնը: Իմ առաջադրած տեխնիկայի պատճառով, 2000 թւականի այդ պարգեւը ինձ է տրուելու, որը կը ստանան հոկտեմբերի 28-ին: 1995 թւականին հիմնադրել է «Ուշագնացութեան Բժշկական Միութիւն»-ը, որը այժմ ունի մօտ 400 անդամ՝ աշխարհի 30 երկրներից: Հայաստանից մասնակցում է մի հոգի: Առաջին երկու տարիներին եղել եմ այդ միութեան նախագահը: Այս միութիւնը իմ կատարած աշխատանքների համար կազմակերպել է տարեկան դասախօսութիւններ «Յովասափեան լէքչըր» անուն տակ: 1980-ից մինչեւ հիմա ունեցել եմ 300-ից աւելի դասախօսութիւններ տարբեր համալսարաններում, ազգային եւ միջազգային համագումարներում:

**Հ.-Արդեօք Թեհրանում Ձեր մասնագիտութեան առնչուող դասախօսութիւններ ունենալու՞ էք:**

**Պ.-** Յեղափոխութիւնից յետոյ երեք անգամ Իրան եմ ճամփորդել: Առաջին անգամ հրաւիրուել էի Շիրազի համալսարանի կողմից, ուր երկու շաբաթ դասախօսութիւններ ունեցայ: Երկրորդը՝ 1996 թւականին էր որ Թեհրանի չորս տարբեր հիւանդանոցներում ու համալսարաններում դասախօսեցի: Այս անգամ Թեհրանի հիւանդանոցներից մեկում պետք է դասախօսութիւն ունենամ, բայց զուտ այդ առիթով չեմ եկել, այլ հարազատներիս տեսնելու եւ Հայաստան ճամփորդելու:

**Հ.- Յարգելի պրոֆեսոր ինչպէս ասացիք մեկնելու էք Երեւան, ո՞րն է այդ ճամբորդութեան նպատակը, եւ մինչ այժմ ի՞նչ ներդրումներ էք ունեցել Հայաստանում:**

**Պ.-** 1996 թ. առաջին անգամ այցելեցի Հայաստան: Երկու շաբաթ Երեւանի «Էրեբունի» պլաստիկի վիրաբու-ժական ճիւղում աշխատել եւ իմ մասնագիտութեան վերաբերեալ գիտելիքներս փոխանցեցի Հայաստանի

# Առողջապահական



մասնագետներին: Այս անգամ հրավիրել են մասնակցելու Հայաստանի բժշկական համալսարանի 70-ամեակի տոնակատարությանը: Հրավիրած են սփիւռքի տարբեր երկրների բժիշկներ, եւ վստահ են, որ արժանի տեղեկութիւններ կը ստանանք Հայաստանի բժշկական համալսարանի մասին: Ես էլ մի դասախօսութիւն պիտի ունենամ իմ մասնագիտութեան վերաբերեալ, բայց դժբախտաբար ծրագրի մանրամասնութեան մասին տեղեկութիւն չունեմ: Ենթադրում են մեծ մասամբ Հայաստանի բժշկական համալսարանի կեանքը 70 տարիների ընթացքում արտացոլող եւ նրա ներկան բնութագրող մի ծրագիր պէտք է լինի:

**Հ.- Յարգելի պրոֆեսոր, ինչպէս է՞ք գնահատում իրանահայերի ներկայ վիճակը եւ հասարակական կեանքը:**

**Պ.-** Բաւականին ծանօթ եմ Իրանահայ համայնքին, Ամերիկայում նոյնպէս հետաքրքրւած եմք, եւ թէ՛ հայերէն թէ՛ անգլերէն լեզուով տպագրող թերթերում կարդում ենք իրանահայերի տարած աշխատանքների՝ ազգային, կրօնական, եւ մանաւանդ հայրենիքին աջակցելու կապակցութեամբ: Ես անձնաբ միշտ լաւ եւ դրական կարծիք եմ ունեցել իրանահայերի մասին: Այս մէկ շաբաթայ ընթացքում շփուելով հարազատների եւ ընկերների հետ՝ վերոյիշեալ եզրակացութեան եմ հանգել: Իսկապէս իրանահայերը շատ են հետաքրքրւած իրենց ազգային եւ կրօնական հարցերով:

**Հ.- Հայկական հարցի վերաբերեալ ի՞նչ է Ձեր կարծիքը, արդէն լսում ենք, որ Ամերիկայի կոնգրեսում նոյն-պէս խօսում է այս հարցի շուրջ: Արդե՞սք կարելի է յոյսեր կապել այդ կոնգրեսի հետ:**

**Պ.-** Նկատի ունեցէք, որ հայերի թիւը ընդհանուր Ամերիկայում շատ մեծ չէ: Մեր եկեղեցական եւ կուսակցական կազմակերպութիւնները բաւականին լաւ են աշխատում: Ամերիկան մեծ երկիր է եւ կառավարման սիստեմը այնպէս է, որ պէտք է մի ճանապարհ գտնես կոնգրեսականների եւ սենատորների հետ խօսելու եւ հայ ժողովրդի խնդիրներն ու պատմութիւնը ներկայացնելու: Շատ դժար է, բայց իմ կարծիքով բաւականին լաւ աշխատանք է տարւում: Ամերիկայում ունենք տարբեր կազմակերպութիւններ, բայց բարեբախտաբար երբ խօսքը վերաբերում է ընդհանուր հայութեանը, յատկապէս մեր Մեծ Ջարդի ճանաչողութեան խնդրին՝ բոլորը համախորհրդում են եւ մինչեւ հիմա բաւականին ազդեցիկ քայլեր

են կիրառել: Իհարկէ մինչեւ այսօր Եւրոպայի պետութիւնները բոլորը պաշտօնապէս չեն ճանաչել թուրքերի կողմից տեղի ունեցած հայկական ջարդը, բայց յոյս կայ, որ շուտով ճանաչի: Հայերի վիճակը Ամերիկայում ընդհանուր լաւ է, բայց մայրենի լեզուի պահպանումը եւ հայոց դպրոցների անցանկալի վիճակը, նրանց ամենամեծ խնդիրն է: Այլասերումը իրօք սպառնում է նրանց: Շիքագոյի տարածքում հայեր քիչ կան, գրեթէ ուրիշ տաս հազար, որը ուր միլիոնի համեմատութեամբ շատ անընշան թիւ է: Ունենք չորս հայկական Առաքելական եւ, մէկ հայ Բողոքական եկեղեցիներ: Երկու եկեղեցիներում կան մանեւ մշակոյթի կենտրոններ, որտեղ շաբաթ օրերը դասաւանդում են հայոց լեզու: Այն եկեղեցում, որ եւ աշխատում են՝ ունի 120 աշակերտներ: Դժար է, բայց որոշ չափով երեխաները սովորում են հայոց լեզուն: Քալիֆորնիա շրջանից, որտեղ հայերը մեծ մասամբ վերջին 15-20 տարիներին են գաղթել, լրիւ տեղեկութիւն չունեմ, այնքանը գիտեմ, որ ունեն տարրական դպրոցներ եւ հայկական մշակոյթի կենտրոններ: Այնտեղ մշակութային կեանքը աւելի եռուն է:

**Հ.-Վերջում «Լոյս» երկշաբաթաթերթի կողմից մեր խո-րին շնորհակալութիւնն ենք յայտնում Ձեզ եւ եթէ որեւէ խօսք կամ խորհուրդ ունեք սիրով կը լսենք:**

**Պ.-** Առաջին անգամն է, որ ձեր թերթը տեսնում եմ: Թերթի չորս համարները կարդացել եմ, բաւականին լաւ թերթ է երեւում: Թէ՛ հայերէն եւ թէ՛ պարսկերէն գրածները շատ պարզ են: Յոյսով «Լոյսը» օրըստօրէ աւելի տարծի եւ ցրի ժողովրդի մէջ եւ արտացոլի հայ ժողովրդի կեանքի ու մշակոյթի պատկերը: Նկատելի է, որ որոշ հայեր Ի-րանից արդէն գաղթում են ուրիշ երկրներ, մեզ համար գուցէ ամենալաւ ճանապարհը չլինի, բայց միւս կողմից ամէն մարդ ըստ պայմանների իր անելիքի իրաւունքն ունի: Վերջում յոյս ունեմ հայ ժողովուրդը միշտ բարգաւաճի աշխարհի բոլոր ծայրերում: Իրանի եւ Հայաստանի յարաբերութիւնները այժմ շատ լաւ է: Յոյսով եմ այդ յարաբերութիւնները օրըստօրէ առաւել զարգանայ:■

*Ֆարցագրոյց վարեցին՝  
Վերծիկ Մահմուդեանը եւ Անահիտ Բարունեանը*

## Նորամուտների գալուստը բարի

**«Լոյս» երկշաբաթաթերթը շնորհաւոր նորածինների ծնունդը:**

**Ռեւաթ Մուրադեան**  
մայրը՝ Վանուշի  
հայրը՝ Ռեմ

**Սելին Օասրեան**  
մայրը՝ Քրիստինե  
հայրը՝ Ռազմիկ

**Լիդիա Յակոբեան**  
մայրը՝ Արեւիկ  
հայրը՝ Հայկ

**Էլիսա Մարիանեան**  
մայրը՝ Գրետա



**Սեւան Սարգսեան**  
մայրը՝ Քրիստինե  
հայրը՝ Հարմիկ

**Արզամ Յակոբեան**  
մայրը՝ Ռուբինա  
հայրը՝ Հրայր

հայրը՝ Ռոբերտ



# ԻՄ ՄՕՏԵՑՈՒՄԸ ԲԱԶՐ ԱՐԵԱՆ ՃՆՇՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

*Քժ. Տիմոտ Սակրալ («Շելթ» ամսագրից),  
Թարգմանեց  
Լեւոն Ահարունեանը*



գործողութիւններով, ինչպիսին են լողը, արագ քայլելը եւ հեծանիւ քշելը: Բայց մինչեւ իսկ Տայ-Չի-ն, որ նազ Ֆիզիկական ջանք պահանջող չինական մի վաղնի մարզածու է, ունենում է իր բարերար ազդեցութիւնը: Նմանապէս օգտակար է ծանրամարտով զբաղելը, պայմանով, որ թեթեւ լինեն կշռաքարերը:

Բարձր արեան ճնշումը (գերճնշում) հազարաւէյ յայտանիշեր է ունենում, սակայն հարուցում է լուրջ բարդութիւններ, ինչպէս, օրինակի համար սրտի եւ ուղեղի կաթած եւ երիկամների աշխատանքի խանգարումներ:

Գերճնշումը կանխելու եւ բուժելու համար կան բաւականին շատ միջոցներ, բայց դժբախտաբար այդ վիճակն ունեցող 50 միլիոն ամերիկացիների մէկ- երրորդը չգիտէ այդ նասին, իսկ գիտակցողների 4-ից միայն մէկն է որ վերհսկողութեան տակ ունի իր բարձր ճնշումը:

Յանձնարարելի է չափել տալ արեան ճնշումը տարեկան գէթ մէկ անգամ : Առաւել յաճախակի ստուգումներ պիտի անել, եթէ գերճնշումը տարածած է ձեր ընտանիքում կամ եթէ առկայ է սրտի հիւանդութեան ռիսկի այլ ազդակներ, ինչպիսիք են ծխելն ու շաքարախտը:

Մինչեւ վերջերս, գերճնշման չափանիշ էր համարում 140/90 կայուն ճնշումը: Սակայն գնալով պարզում է, որ սաստկանում է բարդութիւնների հաւանականութիւնը, եթէ արեան ճնշումը շարունակ մնում է 120/80: Մոյն թերից աչից առաջին (սիստոլիկ) կամ երկրորդի (դիաստոլիկ) յաւելումը առաւել զարկ է տալիս այդ հաւանականութեանը:

Համեմայն դէպս, եթէ ձեր արեան ճնշումը, այսպէս ասած, երկինք չի հասել եւ արտակարգ բարձր (օր. 180/110) չէ, ընդհանրապէս, կարիք չկայ շտապ դեղամիջոցների դիմելու: Առանց դեղամիջոցների մօտեցումները կարող են իջեցնել բարձր արեան ճնշումը, առանց ձեզ կանգնեցնելու դեղերի ոչ-ցանկալի, կողմնակի ազդեցութիւնների դիմաց, ինչպիսիք են յոգնածութիւնը, եւ սեռային խանգարումները: Հնարաւոր է նաեւ, ի սպառ վերջացնել դեղամիջոցներով բուժման անհրաժեշտութիւնը:

**1. Աշխատեք միտքով:** Արեան ճնշումը յաճախ սկըւում է բարձրանալ միջին տարիքում, երբ ձեր մարմնի կշիռը շատանում է կիլոներով: Վերջին փաստերը վկայ են, որ կշռի նազագոյն կորուստն անգամ-մինչեւ իսկ տարեկան կէս կիլոյի չափով-նկատելիօրէն պակսեցնում է բարդութիւնների ռիսկը: Յաջողութեան բանալին կայանում է կշռի կորուստի տարեկան շարունակական լինելու մէջ:

Մրգերով եւ բանջարեղէններով հարուստ կերակրացանկը, սակաւ ճարպ պարունակող կամ անճարպ կաթնամթերքը եւ բուսաթելերով հարուստ ուտելիքները (օր. հացահատիկներ եւ ընդդէմ) նպաստում են միտք մնալուն:

Նման կերակրատեսակները, մնանապէս, լաւ սկզբնադրիւր են հանդիսանում կենսանիւթերի եւ հանքանիւթերի եւ իջեցնում են արեան ճնշումը: Մրանք պարունակում են կալիւմ (պտտասիւմ), մագնեզիւմ, կալցիւմ եւ վիտամին C: Ի հարկէ, այս միտքերը կարելի է ստանալ նաեւ լրացուցիչ (supplement) դեղահատերով, բայց փաստօրէն առաւել օգտակար է, եթէ ստացուեն բնական ուտելիքներից:

**2. Ձեզ գործունեայ պահեք:** Նիւար մնալու գլխաւոր ազդակը մարզանքն է, որ ուղղակիօրէն ազդում է արեան ճնշման վրայ: Իմ առաջարկն է զբաղել այնպիսի

**3. Փոփոխութեան ենթարկեք այն սովորութիւնները, որոնք նպաստում են արեան գերճնշմանը:** Թողեք ծղխելը, եւ ոգելից խմիչքները, չափաւորեք կաՖեին պարունակող ըմպելիքները:

Բարձր արեան ճնշման տէր որոշ անձինք զգայուն են լինում աղի նկատմամբ: Ուստի արժէ խուսափել շատ աղի ուտելիքներից, օր, պահածոյ սուպերից: Նաեւ չափաւորեք աղամանից օգտուելու սովորոյթը:

**4. Խուսափեք հոգեկան ճնշումներից:** Արեան ճնշման մեծ ազդակներ են համարում հոգեկան լարածութիւնը եւ կեանքից առաւելագոյն գոհացում ստանալու մղումը: Եօզան, խսկումը (meditation), մինչեւ անգամ տանը մի ընտելացած կենդանի պահելը փաստում միջոցառումներ են արեան ճնշումը ցածր աստիճանի վրայ պահելու տեսակէտից: Չեր առօրեայում տեղ յատկացրեք ընկերների, ընտանիքի եւ իմաստալից այնպիսի գործերի համար, որոնք զարկ են տալիս կեանքի արժանիքը ճիշտ գնահատելուն:

Եթէ, այս ոչ-դեղամիջոցային քայլերը վեց ամսից մինչեւ մէկ տարի շարունակելով չէք յաջողում բաւարար չափով իջեցնելու ձեր արեան ճնշումը, ապա դուք դեղերով բուժման կարիք ունեք: Միջաբեր դեղերի, օր. հայրոք-քլոր-թաստեղը (HCTZ) եւ քետաբոլկերների, օր. մետոպրոլոլի (Loopressor) օգտաւտնութիւնը փաստում է: Միգաբեր դեղերը, մասնաւորապէս, յաջող են ընկալում մարմնի կողմից, էժան են եւ փոքր դոզաներով են նշանակում բժիշկների կողմից, գլխաւորապէս այն պատճառով, որ շուկայականացման ուժգին աշխատանքը տարւում է առաւել թանկ դեղերի նկատմամբ:

Եթէ, նոյնիսկ, արեան ճնշման դէմ դեղեր էք սպառում, արժէ, որ դրանց զուգահեռ, կիրառեք վերոնշեալ ոչ- դեղամիջոցային յանձնարարութիւնները, որպէսզի նպաստած լինեք արեան ճնշումը ցածր աստիճանի վրայ պահելուն: Եթէ կարողանաք միտքով եւ մեղմել ձեր հոգեկան լարածութիւնը, ապա ձեր բժիշկը հաւանաբար կարող է դեղերի առաւել փոքր դոզա նշանակել եւ մի օր էլ լրի կրճատել դեղերը: ■

**Ուղղում**

Մեր 13-րդ համարի 15-րդ էջի երկրորդ սիւնակում սխալմամբ տպագրուել է.  
... Ես հրաժարեցի իմ 50 տոկոս ստանալիքից ...  
Պէտք է լինի «... Ես իմ ստանալիք 50 տոկոսից 25 տոկոսը յատկացրի դերասաններին եւ խնդրեցի միտքիւնն էլ իր կողմից մի գումար յատկացնի նրանց: Նրանք ասացին,- մեր պայմանագրի մէջ մնան բան չի նախատեսաւ:

# Մարզական

## ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆՆՐԱԳԻՏԱՐԱՆ

### ՔՐՈՑԱԿԱՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հոգեբանական պատրաստականությունը կարևոր տեղ է յատկացում ֆուտբոլում: Քիչ չեն դեպքերը, երբ ուժեղ թիմերն իրենց քաղաքացիների բարոյականային ցածր յատկանիշների պատճառով տանուլ են տալիս թոյլ մրցակիցներին: Հոգեբանական լաւ պատրաստականությունն ամրապնդում է խաղացողի կամքն ու հաւատը, նրան դարձնում նպատակադիր, համարձակ, յամառ, ինքնատիրապետող ու կարգապահ: Այսպիսի ֆուտբոլիստներով համարյա քիչ են չի կարող հաշտել անյաջողութեան հետ եւ չպայքարել մինչեւ վերջ, յաղթանակի համար: Կամային յատկանիշների դաստիարակմանը նըպաստում են յանձնարարող դժարին վարժութիւնների գիտակցական վարժութիւնների գիտակցական յաղթահարումը, սեփական ուժերի նկատմամբ վստահութիւն ներշնչելը, պատասխանատութեան զգացումը, մարզական խօսքի ուժը (բացատրութիւն, քաջալերանք):

Հոգեբանական լաւ պատրաստականութիւնը յատկապէս կարևորում է մրցակիցների դաշտերում խաղալիս, երբ բացակայում է հարազատ միջավայրի մթնոլորտն ու աջակցութիւնը:

**«ՔՐՈՑԱԿԱՆԱՅԻՆ» (բարսելոն)** Ակումբը հիմնել է 1899 թ.: Մարզադաշտը՝ «Նոյելեո Կամպօ» (105.000): Եւրոպայի չեմպիոնների (1992), գաւաթակիրների (1979, 1982, 1989), ՈՒԵՖԱ-ի անդամ (1958, 1960, 1966) գաւաթակիր, միջմայրցամաքային գաւաթի խաղարկման եզրափակիչի մասնակից (1992), Իսպանիայի բազմակի չեմպիոն ու գաւաթակիր: Լաւագոյն խաղացողները՝ Զամորա, Էւարիստօ, Կուբալա, Մուարես, Կոչիշ, Մօտիլ, Յիբր, Նեեսկենս, Ռեկսաչ, ԿրոյՖ, Միմոսեն, Շուստեր, Մարադոնա, Ռոմարիօ, Ստոիչկով, Ռ. Կուման, Սալինաս, Հաջի եւ ուրիշներ:



**ՔԵՂԼՈՐԵԱՆ ԻՇՍԱՆ (ՆՈՒ. 1926թ.)** Յարձակուող: Տեխնիկապէս լաւ պատրաստուած, մարտունակ լաւ պատրաստուած, մարտունակ ֆուտբոլիստ: 1949-50 թթ. Երեւանի «Դինամոյի» կազմում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 41 խաղ, խփել 4 գոլ:


**ՔԵՂԼՈՐԵԱՆ ԿՈՆՍԱՆՏԻՆ (1934-91)** Յարձակուող, կիսապաշտպան, այնուհետեւ պաշտպան: Սպորտի վարպետ: Տեխնիկապէս հմուտ, արագաշարժ, լաւ հարածների տիրապետող ֆուտբոլիստ: 1960-63թթ. Երեւանի «Սպարտակ» եւ «Արարատ» թիմերի կազմերում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 113 խաղ, խփել 12 գոլ: Հայաստանի վաստակաւոր մարզիչ: Աշխատել է մանկապատանեկան թիմերում:

**ՔԵՂԳԻԱ** ֆուտբոլային միութիւնն ստեղծել է 1895թ.: ՖԻՖԱ-ի անդամ է 1940-ից: Խոշորագոյն մարզադաշտը՝ «Մենտեներ» (քրիսել)՝ 70.000: Երկրում կայ 480.000 ֆուտբոլիստ: Քելգիայի հաւաքականը (մարզագգետաը՝ կարմիր մարզաշապիկ, վարտիք, զանգապաններ) 1920թ. օլիմպիական չեմպիոն է, Եւրոպայի 1980թ. առաջնութեան 2-րդ մրցանակակիր: Աշխարհի առաջնութիւններում լաւագոյն ցուցանիշը՝ 4-րդ տեղ (1986թ.): Քելգիական ֆուտբոլին բնորոշ են տեխնիկական բարձր պարտականութիւնը, նուրբ խաղաոճը:



Առաջատար ակումբներն են «Անդերլեխտը», «Մտանդարդը», «Լիլեշը», «Բրիգէն»: Լաւագոյն խաղացողները՝ Բրէյն, Մես, Մերմանս, Վան Հիմսթ, Վան Մուր, Վերկուտելն, Կուլեմանս, Գերետս, ՊՖաՖ, Վանդենբերգ, Պրիդոմ, ՇիՖօ եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիչները՝ Գատինկ, Գուտալս, Գի Տիս, Վան Հիմսթ:

**«ՔԵՆՏԻԿԱ» (Լիսաբոն)** Ակումբը հիմնել է 1904թ.: Մարզադաշտը՝ «Ռեյա Լուց» (120.000): Եւրոպայի չեմպիոնների գաւաթակիր (1961-62), միջմայրցամաքային գաւաթի խաղարկման եզրափակիչների մասնակից (1961-62), Պորտուգալիայի բազմակի չեմպիոն ու գաւաթակիր: Լաւագոյն խաղացողները՝ Էյսեբիօ, Ագուաս, Կոլունա, Գերմանօ, Աուգուստօ, Միմոնս, Թորես, Լուպես, Նենե, Մոզեր, Ժաժօ, Պինտո եւ ուրիշներ:



**ՔԺՅԿԱԿԱՆ ՎԵՐԱՆՍԿՈՂՈՒԹԻՒՆ** ֆուտբոլիստների մարզումային գործընթացի լաւ կազմակերպումը կարևորում է ոչ միայն մանկավարժական ու գիտական, այլեւ բժշկական վերահսկողութեամբ: Բժշկականաբանական հետազոտութիւնների միջոցով կարելի է հաւաստի տեւալներ ստանալ առանձին խաղացողների առողջական ու մարզական վիճակի մասին, կազմակերպել ուժերի վերականգնման գործընթաց եւ այլն:

Բժշկական վերահսկողութեան հիմնական խնդիրը խաղացողների Ֆիզիքական աշխատունակութեան վիճակի ուսումնասիրումն է, դրա հետ կապուած՝ մարզումների մեթոդի արդիւնաւէտութեան ստուգումը, սննդակարգի սահմանումը, բժշկական հետազոտութիւնները, դիսպաներային բուժումը: Դիսպաներային հետազոտութիւն կատարում է տարին 2-4 անգամ եւ կրում է փուլային բնոյթ: Ուսումնասիրում են ֆուտբոլիստի քաշահասակային տեւալները, կատարում արեան վերլուծութիւն, մարզոցներով ու վարժութիւններ, հետազոտում են շնչառութեան յանախականութիւնը, արեան ճնշումը, թրթածին առաւելագոյն օգտագործումը եւ այլն: Ստացուած տեւալները թիմի բժշկին հնարաւորութիւն են տալիս ի յայտ բերելու լիարժէք մարզմանը խանգարող երեւոյթներ՝ զերլարածութիւն, գերլոգնածութիւն, նաեւ՝ վատ ինքնազգացողութիւն, անքնութիւն, ախորժակի կորուստ, քաշի նագում, մարզելու ցանկութեան վերացում: ■

# Ժամանց

12-րդ ՊԺ-ի ընտրությունների օրը հանդիպած կատակալից իրականություններ:

- Պատմում են քրատուփերի հսկիչներից Մի ծեր կին եկել էր ընտրութեան, հարցրի.
- Մայրիկ ջան, ձեր տան համարը՝ փաթը ինչէ:
- Չեմ գիտի, տղա ջան, հետս չեմ բերի:

\*\*\*

Քւտարկողներից մեկին հարցրի.

- Չեր հասցեն ասեք, որտե՞ղ է:
- Ըստիա՛ ԲաՖՖիի փողոց ենք:

\*\*\*

Մի մեծ կին եկել էր ընտրութեան. ասաց.

- Մեջելդս (անձնագիր) վերցրու, տղա ջան, ում, որ սիրտդ ա ուզում մեջը գրի, ես հո ոնչումին չեմ ճանչնում:

\*\*\*

Մի երիտասարդ եկաւ հարցրեց.

- Մեր տունը Մեթխանդանա. Մեթխանդանը Նարմա-քին ուտումա՛:

\*\*\*

Մի ծեր մարդու հարցրի.

- Հայրիկ, Չեր տան համարը ի՞նչ է:
- Ինչը՞, արժեքը՞... 15 միլիոն:

\*\*\*

Մի կին իրենց տան համարը չգիտեր, գնաց տուն, վերադարձաւ. մի գրութիւն էր բերել, տեց մեզ ու ասաց.

- Էս մարթիս անունա, էս էլ իրա փաթնա:
- Գնաց դռան մօտ, վերադարձաւ.
- Հա իմ փաթն էլ մարթիս փաթի նմանա:

\*\*\*

Մի մեծահասակ կին, որ գրել չգիտեր, ասացինք, որ իր մատը որ նկարի վրայ, դնի՝ իր համար կը գրեն:

Այս կինը եկաւ սեղանի մօտ մատը լաւ քանաքոտեց ու իր քանաքոտ մատը ամուր սեղմելով թեկնածուներից մի քանիսի նկարներին՝ հաստատեց, թէ ում է ուզում քրտարկի:

\*\*\*

Քւտարկողներից մեկին էլ պատարտուն էր իր հետ բերել: Նրան բացատրեցինք, որ մեզ մօտ գալիս են միայն անձնագրով (ներքին):

Նա զարմացած նայեց ու ասաց:

Ամէն երկիր սրանով ընդունում են, ըստեղ չե՞մ ընդունում:

☆☆☆

## ԱՒԱՆԱԿԻ ՄԵԾԱՐՈՒՄԸ

*Վարդան Այգեկցի*

Էշին պատի արժանացրին ու հրախրեցին թագաւորի որդու հարսանիքին:

- Վայ ինձ,- ասում է էշը,- ես ոչ շեփորահար եմ ու ոչ պարբող, գիտեմ, որ հարսանիքին ինձ վիճակաւած է ծանր բեռ կամ ջուր կրել:

Ընտրություններից առաջ

Ընտրապայքար



Ընտրութեան օրը

Ընտրականազար



Ընտրություններից յետոյ

Ընտրաբայքայ



## ՎԱՐԱԶՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

*Վարդան Այգեկցի*

Վարազը մեծ ջանք ու եռանդով սրում էր իր աստամները:

Գալիս է աղւեսն ու հարցնում.

Այդ ի՞նչ ես անում , չէ որ հիմա կովի ու պատերազմի վտանգ չկայ:

Լռիր , գարշելի աղւես , - պատասխանում է նրան վարազը , - դու ի՞նչ ես հասկանում պատերազմից: Այն ժամանակ ով կարող է դրադուր զենքի սրելով: Ձեքն այնժամ պետք է սրել , երբ պարապ ես:

## ԱՂԻՄՆ ՈՒ ԽԵՅԳԵՏԻՆԸ

*Վարդան Այգեկցի*

Աղւեսն ու խեցգետինը բարեկամացան , միասին ցանեցին ու խեցգետինը բարեկամացան , միասին հեճեցին արտերը , կալսեցին ու շեղեցին ցորենը:

Ելնեք բլրի կատարը ու վազելով գանք , - առաջարկեց աղւեսը , - ով շուտ հասնի՝ կալը , ցորենը նրան լինեն:

Երբ ելան բլուրը , խեցգետինն ասաց աղւեսին .

-Խնդրում եմ , երբ վազել ուզենաս, պոչովդ հարածիք ինձ , որ իմանամ ու գամ քեզ հետ:

Եւ խեցգետինը բացեց իր մկրարը :Աղւեսն իր պոչով խփեց ու վազեց, իսկ խեցգետինը փակելով մկրարը կպաւ նրա պոչին: Երբ աղւեսը հասաւ ցորենի շեղջին, ետ շրջեց տեսնելու, թէ որտեղ է խեցգետինը: Իսկ խեցգետինը ընկնելով շեղջի վրայ , ասաց.

Հանուն աստծու , այս ամենը իմն է:

Աղւեսը զարմացաւ .

Ով դու չար , ե՞րբ հասար այստեղ:

# ԱՐԱԳԱԾԻ ԼԱՆՋԵՐԻՆ

ՍօճնօժՍ »Ս ԻՄ ԱՅ ՍՅ ՎՅ Ի ձօճՅ ՎձՕ,  
Յ ԱՍՄ ՁնձԱՍՅՅձձՁ Է. Յ իձձձձ ձօժՎ  
**Պրոֆ. Ռ. Ղազարեան**

Աշոտի կարծիքով, ես երկու հիմնական քերթիքներ ունեմ. նախ՝ կուարար չեմ, իսկ երկրորդը՝ գերազանցիկ եմ: Դրանից, նա չգիտես ինչու, եզրակացնում է, որ ես երկչոտ եմ: Բայց քաջութիւնը կուարարութեան մէջ չէ: Օրինակ Միքայէլը շատ քաղաքաւարի մարդ է, բայց գիտութեան համար քիչ էր մնում կեանքը զոհել: Ես չեմ ասում, որ Միքայէլի մնան խիզախ եմ, բայց կենդանաբանական այգում կատարածից յետոյ ոչ ոք չի ասի, որ երկչոտ եմ՝ անգամ Աշոտը: Հիմա բոլորը հաւատում են, որ ես թունաւոր օձեր եմ բռնել, որովհետեւ Միքայէլը հաստատեց իմ պատմածը: Թէ չէ Աշոտը միշտ ընդհատում էր՝ ասելով՝ «Կամաց փչի՛ պատերը կը փլւեն »: Պարզ է, Միքայէլին նա այդպէս չէր պատասխանի, որովհետեւ Միքայէլը շուտով արարեւելու է համալսարանը: Նրա դիպլոմային աշխատանքը նիւրաձ է հայկական թունաւոր իժի խայթածքի դէմ հակաթոյն գտնելու հարցին: Դա շատ կարեւոր է: Միքայէլն ասում է, որ Հայաստանում օձերը խայթում են տարեկան քառասունից-յիսուն մարդու, որոնցից մի քանիսը մահանում են: Այս գործի, մէկ էլ կենդանաբանական այգին հարրստացնելու համար Միքայէլին բազմաթիւ օձեր էին անհրաժեշտ: Եւ անա ամառը ես ու Միքայէլը բարձրացանք Արագած՝ օձեր որսալու: Դրանից առաջ ես սուկալի վախենում եւ զգում էի օձերից: Բայց Միքայէլը ասաց, որ դա կանցնի: Եւ իրօք անցաւ:



Գիւղից դուրս եկանք վաղ առաւօտեան ու սկզբում հանդիպեցինք ոչ թէ օձի, այլ լորտուի: Երբ ես Միքայէլի ձեռքի մէջ տեսայ կէս մետրի չափ դեղմատուն գալարոտ այդ սողունին, ուղղակի ցնցեցի գարշանքից ու վախից, կարծելով, որ դա թունաւոր օձ է, բայց Միքայէլն ասաց, որ հակառակը՝ դա օձերի թշնամին է: Նա ուժեղ ծնոտներ ունի և ուղղակի կրծում է օձերին, իսկ մարդու համար բոլորովին անվտանգ է:

Յետոյ առաջարկեց, որ ձեռքս վերցնեմ լորտուին: Սկզբում ես կտրուկ հրաժարուցի, սակայն Միքայէլն այնքան համոզեց, որ ի վերջոյ համաձայնեցի: Բայց ամենամասպասելին այն էր, որ երբ ես զգացի ձեռքիս մէջ լորտուի կոշտ, ասես զրահապատ մարմինը, իմ զգանքը անհետացաւ: Ես շատ ուրախացայ, անգամ հպարտացայ իմ համարձակութեամբ: Այն ժամանակ Միքայէլն ասաց, որ յարակաւ գնծութիւնն անտեղի է, որովհետեւ դա մողէսի մի տեսակ է, որի նախնիքը հետզհետեւ կոր-ցրել են իրենց ոտքերը եւ նմանել օձերին: Ուրեմն բռնածս ընդամենը «հաշմանդամ» մողէս է: Ափսոս...

Յետոյ բաց թողեցինք լորտուին: Միքայէլն ասաց, որ պէտք է շտապել, երբ արեւը ուժեղ տաքացնի, օձերն արագաշարժ կը դառնան, ու նրանց բռնելը դժար եւ վտանգաւոր կը լինի: Դա նրանից է, որ նրանք սառնարիւն կենդանիներ են:

Մենք ուղղեւորեցինք դէպի « Օձի կոնոյ » կոչւած բլուրը:

Ճանապարհին Միքայէլը չափազանց հետաքրքիր բաներ պատմեց օձերի մասին: Նախ ասաց, որ Հայաստանում քսաներկու տեսակի օձ կայ, որոնցից միայն չորսն է թունաւոր: Իսկ թունաւորներից էլ միայն երկուսն են մահացու՝ գիրգան եւ հայկական իժը: Բայց ամէնից շատ Միքայէլը փափագում էր կատաօձ բռնել, որը հազարազիւս է հանդիպում:

Մի անգամ նրան գիրգայ է կծել: Տասներկու օր նա կեանքի ու մահուան միջեւ է գտնել, եւ առողջացել է սրբակամ շիճուկի շնորհիւ:

- Եթէ հայկական իժը կծած լինէր, բանս բուրդ էր, ասաց նա ժպտալով:

Երբ արդէն մօտեցել էինք « Օձի կոնոյ » ստորոտին, Միքայէլը յանկարծ կռացաւ եւ համարեա ոտքերիս տակից, ուղղակի ձեռքով վեր թոցրեց մի երկար օձ: Անպիտանն այնպէս էր յարմարել շրջապատին, որ ես բոլորովին չէի նկատել նրան: Դրանից յետոյ արեւի ուշադիր էի նայում շուրջս: Միքայէլը տեսնելով դէմքիս արտայայտութիւնը՝ ծիծաղեց.

- Մի վախեցիր, թունաւոր չէ:

Յետոյ նա օձը աջ ձեռքում պահած սկսեց բացատրել, թէ ինչպէս կարելի է տարբերել թունաւոր օձին ոչ թունաւորից: Տարօրինակ բան՝ բոլորովին չէր փորձում խայթել նրա ձեռքը:

- Օձը չի կծի այն ձեռքը, որը նրան օդի մէջ է պահում, ասաց Միքայէլը, - նա կարծում է, որ դա ծառի ճիւղ է կամ յենարան: Ուրիշ բան, եթէ ես մօտեցնեմ միւս ձեռքս...

Ու յանկարծ... Ուզում էք հաւատացեք, ուզում էք՝ ոչ, Միքայէլի ասածը ապացուցելու համար մօտեցրեց ձախ ձեռքը եւ թոյլ տուց, որ օձը, լայն բացելով փոքր գլխի համար բաւական մեծ երախը, խայթի իր ձեռքը: Բայց Միքայէլը հանգստացրեց ինձ եւ ցոյց տուց խայթածը՝ ատամների բացած փոքրիկ ծակեր ու մի կաթիլ արիւն:

- Ահա եւ ամէնը, - ժպտաց նա:

Երբ ուշքի եկայ, հարցրի Միքայէլին, թէ ինչու այդպիսի խելօք կենդանին, ինչպիսին օձն է, ձեռքը ճիւղից չի տարբերում:

- Օձի խելքի մասին եղած բոլոր պատմութիւններն ու հրաշքները պարզապէս հեքիաթներ են, - ասաց Միքայէլը, - դրանք տգիտութեան եւ վախեցած երեւակայութեան ծնունդ են, իր զարգացման աստիճանով օձը շատ եւ շատ կենդանիներից ցածր է գտնուում...

- Միքայէլ, իսկ ճի՛շտ է, որ օձերը հիպնոսելու ունակութիւն ունեն: Իբր թէ մանր գազաններն անգամ անշարժ-ժանուն են վիշապ օձի առաջ: Ըստերը նոյնիսկ նկատել են, թէ ինչպէս հիպնոսած գորտը ուղղակի ցատկում է լորտուի երախը:

- Ո՛չ, ո՛չ, - ժպտաց Միքայէլը, - օձերը հիպնոսել չեն կարող. անկարող են նաեւ ստիպել իրենց զոհերին կամաւոր գերութեան յանձնել:

- Բո ասելով, բոլոր նման վկայութիւնները սո՛ւտ են: Միքայէլը բացասաբար ճոճեց գլուխը: